

**ԱՊՅ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՋԱԺՈՂՈՎ**

*Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության
մոնիտորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ «ԱՊՅ
ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

(ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)

**ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏ
2014**

ՉՏԴ 342.8: 343(07)

ԳՄԴ 67.99(2)05+67.99(2)8 ց7

Ա 706

**Երաշխավորվել է տպագրության Երևանի պետական
համալսարանի քրեական իրավունքի ամբիոնի կողմից**

Ա 706 Ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունքների քրեաիրավական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում՝ «ԱՊՀ մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» Կոնվենցիայի համատեքստում: Գիտամեթոդական ձեռնարկ/ Ս.Վ. Առաքելյան, Գ.Ս. Ամիրյան, Տ.Ա. Խաչիկյան.– Եր.: Հայրապետ հրատ., 2014: – 120 էջ:

Ձեռնարկում միջազգային-իրավական համապատասխան փաստաթղթերի, ՀՀ գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի նյութերի, ինչպես նաև տեսական աղբյուրների ուսումնասիրության հիման վրա վերլուծվել են ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունների քրեաիրավական որակման և քննության մեթոդիկայի տեսական ու գործնական նշանակություն ունեցող մի շարք արդիական հիմնախնդիրներ:

Աշխատանքում ներկայացվում են ՀՀ-ում 2004-2013 թթ. գրանցված ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունների վիճակը, կառուցվածքը և շարժընթացը բնութագրող ցուցանիշները, ինչպես նաև պարզաբանվում են քննարկվող հանցագործությունների առանձին տեսակների օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներն ու ծանրացնող հանգամանքները:

Ձեռնարկը հավելվածների տեսքով ներառում է նաև քաղվածքներ միջազգային-իրավական համապատասխան փաստաթղթերից և ՀՀ գործող օրենսդրությունից, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված հանցագործություններին վերաբերող հիպոթետիկ իրադրություններ:

Սույն հրատարակությունը կարող է օգտակար լինել ՀՀ-ում նախաքննություն իրականացնող իրավապահ մարմինների, դատական-դատախազական աշխատողների, փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, դասախոսների և քրեական իրավունքի հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

ՉՏԴ 342.8: 343(07)

ԳՄԴ 67.99(2)05+67.99(2)8 ց7

ISBN 978-9939-838-19-9

© Հայրապետ հրատ., 2014

Գրախոսողներ՝

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա.Յ. Գաբուլյան**

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու **Տ.Վ. Սիմոնյան**

Գիտական խմբագիր՝

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ, արդարադատության գեներալ-լեյտենանտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ վաստակավոր իրավաբան **Վ.Գ. Շահինյան**

Հեղինակներ՝

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման և քննության մեթոդիկայի մշակման բաժնի պետ, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների դոկտոր **Ս.Վ. Առաքելյան**

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման և քննության մեթոդիկայի մշակման բաժնի գլխավոր մասնագետ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ **Գ.Ս. Ամիրյան**

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման և քննության մեթոդիկայի մշակման բաժնի գլխավոր մասնագետ, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ **Տ.Ա. Խաչիկյան**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
1. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2004-2013թթ.	16
2. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆԱԳՐՔԻ	27
2.1. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը (քր. օր.-ի հոդված 149) ...	27
2.2. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը (քր. օր.-ի հոդված 150)	38
2.3. Ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը (քր. օր.-ի հոդված 151)	43
2.4. Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը (քր. օր.-ի հոդված 152)	49
2.5. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը (քր. օր.-ի հոդված 153)	54
2.6. Քվեարկության գաղտնիությունը խախտելը (քր. օր.-ի հոդված 154)	58
2.7. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ իրացնելը (քր. օր.-ի հոդված 154 ¹)	62
2.8. Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը (քր. օր.-ի հոդված 154 ²)	68

2.9. Ընտրական հանձնաժողովի կնիքը չվերադարձնելը, կնիքի պահպանման սահմանված կարգը խախտելը (քր. օր.-ի հոդված 154 ³)	76
2.10. Ձեռքով տեղամասային կենտրոն մուտք գործելը (քր. օր.-ի հոդված 154 ⁴)	83
2.11. Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալը (քր. օր.-ի հոդված 154 ⁵)	88
2.12. Ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (հոդված 154 ⁶)	93
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	97
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	106
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՔԱԴՎԱԾՔՆԵՐ ՕՐԵՆՔՆԵՐԻՑ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՑ	106
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՔԱԴՎԱԾՔ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻՑ.....	108
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՊՈԹԵՏԻԿ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	114

ՆԵՐՎՃՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 3-ը սահմանում է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Նույն հոդվածի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ Սահմանադրության 2-րդ գլուխն իր հերթին ամրագրում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնք պայմանավորում են անձի կարգավիճակը մեր երկրում՝ որպես ժողովրդավարական, իրավական պետությունում: Այդ իրավունքներն ու ազատություններն ըստ բովանդակության կարող են դասակարգվել հետևյալ կերպ՝ ա) քաղաքական, բ) անձնական, գ) սոցիալական, դ) տնտեսական, ե) մշակութային և զ) բնապահպանական:

Մինևույն ժամանակ պետության ժողովրդավարականության և իրավականության մակարդակը որոշվում է ոչ միայն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների հռչակմամբ և օրենսդրական ամրագրմամբ, այլև (առավելապես) դրանց պաշտպանության իրական ապահովմամբ: Մասնավորապես, այդ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը պետք է իրականացվի քաղաքական, տնտեսական, սոցիալական և իրավական բնույթի տարբեր միջոցներով:

Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների երաշխիքների համակարգում կարևոր տեղ է զբաղեցնում դրանց քրեաիրավական պաշտպանությունը: Վեր-

ջինս հանդես է գալիս որպես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հանցավոր խախտումների դեմ պայքարի, հանրորեն վտանգավոր ոտնձգություններից նրանց օրինական շահերի պաշտպանության առավել խիստ և գործուն միջոց: Սակայն այդ պաշտպանության արդյունավետությունը կախված է ոչ միայն քրեական օրենսգրքում համապատասխան նորմերի սահմանման մակարդակից և որակից, այլև գործնականում դրանց հստակ, ճշգրիտ ու ամբողջական կիրառումից:

Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների քրեաիրավական պաշտպանությունը իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով, որոնք սերտորեն փոխկապակցված են՝

1) մարդու անձնական կյանքին պետության միջամտության հիմքերի և շրջանակների հստակ սահմանում ու հասարակության շահերը էականորեն խախտող արարքների քրեականացում:

2) մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները խախտող և ազատությունները ոտնահարող ոտնձգությունների համար քրեական պատասխանատվության նախատեսում:

Միևնույն ժամանակ հասարակությունում և պետությունում մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ամուր հաստատման համար անհրաժեշտ է դրանց իրականացման հստակ կազմակերպարավական կառուցակարգ՝ համապատասխան իրավական երաշխիքների ներառմամբ: Այդպիսի երաշխիքներից է նաև ՀՀ քրեական օրենսգրքի գլուխ 19-ով նախատեսված հանցագործությունների համար քրեական պատասխանատվության սահմանումը:

Կախված քրեաիրավական պաշտպանության անմիջական օբյեկտից՝ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ ուղղված հանցագործություն-

ներն ընդունված է բաժանել երեք խմբի՝ 1) **իրավահավասարության սկզբունքի և անձնական** իրավունքների ու ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ, 2) **սոցիալ-տնտեսական (աշխատանքային)** իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ և 3) **քաղաքական** իրավունքների ու ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ:

Քննարկվող հանցագործությունների երրորդ խմբում հիմնականում նախատեսված են, այսպես կոչված, ընտրական հանցագործությունները, այսինքն՝ հանցավոր այն արարքները, որոնք կապված են ընտրական տարբեր գործընթացների հետ: Մասնավորապես, դրանց շարքը կազմող 14 հանցագործություններից 12-ը հենց նշված հանցավոր արարքներն են: Բացառություն են կազմում՝ 1) միավորումներ (հասարակական կամ արհեստակցական միություններ) կազմելու կամ կուսակցություններ ստեղծելու իրավունքի իրականացմանը կամ դրանց գործունեությանը խոչընդոտելը (քր. օր.-ի հոդված 161) և 2) հավաքներ անցկացնելուն կամ դրանց մասնակցելուն խոչընդոտելը (քր. օր.-ի հոդված 163):

Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացների կարգավորմանն են վերաբերում ՀՀ Սահմանադրության հոդվածներ 2-ը, 4-ը և 30-ը:¹ Ընտրությունների և հանրաքվեների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման հետ կապված հարցերը կարգավորվում են նաև Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով», ինչպես նաև «Հանրաքվեի մասին» ու «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքներով:

Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնի ընտրությունների միջազգային իրավական կարգավորմանն է նվիրված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի» թիվ 1 արձանագրութ-

¹ Տե՛ս՝ Հավելված 1-ը:

յան (20 մարտի 1952թ., Փարիզ) հոդված 3-ը, որն ունի «Ազատ ընտրությունների իրավունք» անվանումը:²

ՀՀ-ում ընտրական գործընթացների իրավական կարգավորման առումով առանձնահատուկ նշանակություն ունի նաև «ԱՊՀ մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա):³ Վերջինս ստորագրվել է ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների Խորհրդի 2002 թ. հոկտեմբերի 7-ի նստաշրջանում, որը կայացել է Մոլդովայի մայրաքաղաք Քիշնևում:

Տվյալ փաստաթղթի ստորագրմանը մասնակցել են Հայաստանի, Վրաստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Ռուսաստանի, Տաջիկստանի և Ուկրաինայի նախագահները: Սկզբնապես Կոնվենցիան վավերացրել են ԱՊՀ մասնակից երեք պետությունների (Ռուսաստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի) խորհրդարանները, ինչը հիմք է հանդիսացել Անկախ պետությունների համագործակցության Գործադիր կոմիտեի 2003 թ. նոյեմբերի 11-ի որոշմամբ Կոնվենցիան ուժի մեջ մտցնելու համար (Կոնվենցիայի 22 հոդվածի 1-ին կետին համապատասխան): Հետագայում՝ 2004 թ. հունիսի 23-ին, Կոնվենցիան վավերացրել է Մոլդովայի Հանրապետությունը, իսկ 2005 թ. փետրվարի 28-ին՝ Հայաստանի Հանրապետությունը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Կոնվենցիան, վերապահում է կատարել՝ նշելով, որ «ՀՀ-ին իրավունք է վերապահվում Կոնվենցիայի հոդված 1-ի («Ժողովրդավարական ընտրությունների չափանիշները») 7-րդ կետով, հոդված 10-ի («Արդար ընտրությունները») 3-րդ կետով, հոդված 14-ի («Ազգային դիտորդների կարգավիճակն ու լիազորությունները») 1-ին և 3-րդ կետերով նախատես-

² Տե՛ս՝ նույն տեղում:

³ Տե՛ս՝ Вестник Межпарламентской Ассамблеи. СПб., 2002. № 3 (32), էջեր 343-366:

ված պահանջները կատարել Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

Հետագայում՝ 2007 թ. դեկտեմբերի 18-ին, ՀՀ ազգային ժողովը որոշում է կայացրել Կոնվենցիայի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից նոր վերապահումներ կատարելու մասին: Այդ առումով նշվել է, որ Կոնվենցիայի՝ Հայաստանի համար ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ ընտրական օրենսգրքում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք հակասություններ են առաջացրել Կոնվենցիայի որոշ դրույթների հետ: Մասնավորապես, Հայաստանի վերապահումների առաջին դրույթը վերաբերել է երկրի տարածքից դուրս ընտրություններ կազմակերպելուն: Փոփոխված ընտրական օրենսգրքով ՀՀ տարածքից դուրս տեղամասեր չեն ձևավորվում և քվեակություն չի լինում, մինչդեռ Կոնվենցիան ամրագրում է նման դրույթ: Մյուս վերապահումը վերաբերել է Կոնվենցիայի հոդված 4-ին, ըստ որի՝ քվեաթերթիկում պետք է լինի «բոլորին դեմ» առանձին տող, ինչը ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններով նախատեսված չէ:⁴

Այդպիսով, 2005 թ. մարտի 15-ի դրությամբ Կոնվենցիան վավերացվել էր ԱՊՀ մասնակից յոթ պետություններից հինգի (Ռուսաստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Սոլդովայի և Հայաստանի) կողմից: Հետագայում՝ 2007 թ. հունիսի 13-ին, Կոնվենցիային միացել է Ղազախստանի Հանրապետությունը, ինչի մասին տվյալ պետության Նախարարների խորհուրդը (կառավարությունը) համապատասխան նոտայով տեղեկացրել է ԱՊՀ Գործադիր կոմիտեին:⁵

⁴ Տե՛ս՝ <http://armenpress.am/arm/print/436955/>:

⁵ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս՝ Конвенция о стандартах демократических выборов, избирательных прав и свобод в государствах – участниках Содружества Независимых Государств: Документы и материалы / Отв. ред. доктор юридических наук, заслуженный юрист Российской Федерации В.И. Лысенко. – М.: РЦОИТ, 2008, էջ 99:

Կոնվենցիան իր կարգավորման բովանդակությամբ և բնույթով, ըստ էության, հանդես է գալիս որպես համապարփակ միջազգային իրավական փաստաթուղթ, որով փորձ է արվում նախանշելու ընտրությունների կազմակերպման և անցկացման հիմնական ելակետային դրույթները, սահմանելու հնարավորինս միասնական իրավակարգավորում՝ խարսխված ժողովրդավարական հայտնի սկզբունքների վրա: Կոնվենցիայի անժխտելի արժանիքներից է, որ այն, կարծես, միավորում է համանման իրավական համակարգեր ունեցող պետություններում ընտրությունների կազմակերպման գործող իրավադրույթները՝ հիմքեր ստեղծելով նաև ընտրական իրավահարաբերությունների զարգացման կուտակված փորձի յուրօրինակ դրսևորում դառնալու համար:

Վերոշարադրյալի հիման վրա վստահաբար կարելի է պնդել, որ Կոնվենցիան ընտրական իրավունքին վերաբերող ուղենիշային նշանակություն ունեցող նմուշային ակտ է: Ասվածն առավել հիմնավորվում է նրանով, որ այլ պետություններ նույնպես կարող են միանալ դրան համապատասխան վավերապայմանների առկայության պարագայում, ինչը ևս մեկ անգամ ընդգծում է, որ այն նախատեսված չէ սոսկ որոշակի տարածաշրջանային հանրույթի համար:

Կոնվենցիան կազմված է 25 հոդվածներից, որոնցից առաջին տասը վերաբերում են ընտրական իրավունքի սկզբունքներին: Մասնավորապես, կոնվենցիոնալ ամրագրում են ստացել ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրության և գաղտնի քվեարկության առանցքային սկզբունքները, որոնց կիրառական նշանակությունը մասնակից բոլոր պետությունների ոլորտային օրենսդրությունների ունիֆիկացման և ժողովրդավարացման գործում, մեղմ ասած, դժվար է գերազնահատել:

Այնուհետև, Կոնվենցիայի հաջորդ հոդվածներում, առավել հասցեավորված և առարկայական կարգավորում են ստացել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ վստահված անձանց լիազո-

րությունները, ընտրությունները կազմակերպող անկախ պետական մարմնի կարգավիճակին վերաբերող, ինչպես նաև ընտրական իրավունքների և ազատությունների խախտումների բողոքարկման հետ կապված հարցերը և այլն:

Ամփոփելով ասվածը՝ պետք է նշել, որ Կոնվենցիայի պատշաճ ուսումնասիրումն ու դրանով պայմանավորված՝ գործնական առաջարկների ներկայացումը մի նոր հարթակի վրա կբարձրացնի ներպետական ընտրական օրենսդրության զարգացման մակարդակը՝ հանգեցնելով տեսություն-պրակտիկա կապի ներդաշնակեցմանը և ժողովրդաիշխանության իրականացման ընթացակարգերի կատարելագործմանը:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացների քրեաիրավական պաշտպանությանը, ապա պետք է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ընտրական հանցագործություններն են՝

1) ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը (հոդված 149),

2) ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը (հոդված 150),

3) ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը (հոդված 151),

4) ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը (հոդված 152),

5) մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը (հոդված 153),

6) քվեարկության գաղտնիությունը խախտելը (հոդված 154),

7) կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեա-

թերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ իրացնելը (հոդված 154¹),

8) ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը (հոդված 154²),

9) ընտրական հանձնաժողովի կնիքը չվերադարձնելը, կնիքի պահպանման սահմանված կարգը խախտելը (հոդված 154³),

10) զենքով տեղամասային կենտրոն մուտք գործելը (հոդված 154⁴),

11) վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալը (հոդված 154⁵),

12) ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (հոդված 154⁶):

Նշված բոլոր հանցագործությունների **անմիջական օբյեկտը** ընտրությունների կամ հանրաքվեի անցկացման կամ քվեարկության՝ օրենքով սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Քննարկվող հանցագործությունների դեմ պայքարի գործում հատկապես պետք է կարևորել Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության դերը: Բանն այն է, որ «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի համաձայն՝ «Հատուկ քննչական ծառայությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև **ընտ-**

րական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն»:

Նույն օրենքի հոդված 4-ի համաձայն՝ տվյալ իրավական ակտի իմաստով ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունները հանցավոր այն արարքներն են, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 149-ով (**«Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը»**), 150-ով (**«Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը»**), 154¹-ով (**«Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ իրացնելը»**) և 154²-ով (**«Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը»**) հոդվածներով:

Այսպիսով, ընտրական գործընթացների հետ կապված վերոհիշյալ չորս հանցատեսակների վերաբերյալ քրեական գործերով նախաքննությունն իրականացնում է ՀՀ հատուկ քննչական ծառայությունը:

Այս առումով վիճահարույց է այն հարցը, թե ինչու է նշված ծառայությանը վերապահված միայն հիշատակված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննությունը: Ավելին, քննարկվող գործընթացների հետ կապված՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցավոր արարքները, որպես կանոն, զուգորդվում են մեկը մյուսով և հաճախ պայմանավորում են համապատասխան քրեական գործերի քննությունը մեկ վարույթի շրջանակներում միավորելու անհրաժեշտությունը: Ուստի, առավել նպատակահարմար կլիներ ընտրական գործընթացների հետ կապված բոլոր հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության իրականացումը վերապահել քննչական մեկ մարմնի (բնավ չի պահանջ-

վում, որ այդպիսին հանդիսանա միայն ՀՀ հատուկ քննչական ծառայությունը):

Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 149-ով, 150-ով, 154¹-ով և 154²-ով նախատեսված հանցագործություններն ամենամեծ մասնաբաժինն ունեն ընտրական գործընթացների հետ կապված բոլոր հանցավոր արարքների ընդհանուր կառուցվածքում: Մասնավորապես, ՀՀ-ում 2004-2013 թթ. ընթացքում գրանցված՝ ընտրական գործընթացների հետ կապված ընդամենը 94 հանցագործություններից 63-ը (67,02%-ը) հենց նշված հոդվածներով նախատեսված հանցանքներն են (տե՛ս աղյուսակ 2-ը և նկար 2-ը):

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ վերը ներկայացված հանգամանքները վկայում են գիտամեթոդական սույն ձեռնարկի պատրաստման անհրաժեշտության և հրատապության մասին: Այդ առումով տվյալ աշխատանքի շրջանակներում նպատակ է դրվել պարզաբանելու ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունների քրեաիրավական որակման առանձնահատկությունները, ինչպես նաև մշակելու ՀՀ քրեական գործող օրենսդրության կատարելագործմանն ու իրավակիրառ պրակտիկայի արդյունավետության բարձրացմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ:

*ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ,
արդարադատության գեներալ-լեյտենանտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ վաստակավոր իրավաբան Վ. Գ. Շահինյան*

1. ԸՆՏՐՎԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՅԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2004-2013թթ.

Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայի և պաշտոնական վիճակագրության վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունների մակարդակն առավել մտահոգիչ է հատկապես համապետական՝ ՀՀ Ազգային ժողովի և Նախագահի ընտրությունների տարիներին: Հավանաբար, տվյալ հանգամանքը պայմանավորված է նշված տարիներին քաղաքական (ընտրական) գործընթացների առավել աշխուժացմամբ և այդ գործընթացներին հանցավոր տարրերի մասնակցության ակտիվացմամբ:

Այսպես, ՀՀ 2004-2013 թթ. պաշտոնական վիճակագրության համաձայն՝ տվյալ ժամանակահատվածում հանրապետությունում ընդհանուր առմամբ գրանցվել է ընտրական գործընթացների հետ կապված 94 հանցագործություն: Ընդ որում, առավել հաճախ նշված հանցանքները կատարվել են 2007 (13 կամ՝ 13,9%), 2008 (28 կամ՝ 29,8%), 2012 (16 կամ՝ 17,0%) և 2013 (նույնպես 16 կամ՝ 17,0%) թվականներին (տե՛ս աղյուսակ 1-ը): Մյուս տարիներին գրանցված ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունները, որպես կանոն, կապված են կա՛մ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, կա՛մ ընտրություններին հաջորդած հետընտրական ժամանակահատվածում այդ ընտրությունների ընթացքում կատարված հանցավոր արարքների բացահայտման և քրեական հետապնդման հարուցման հետ:

Աղյուսակ 1


**ՀՀ-ում 2004-2013 թթ. գրանցված
ընտրական հանցագործությունների շարժընթացը**

2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	Ընդամենը
4	3	6	13	28	5	1	2	16	16	94

Ներկայացված աղյուսակից հետևում է նաև, որ քննարկվող ժամանակահատվածում կատարված ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունների առավել մեծ մասնաբաժինը (շուրջ 30%-ը) բաժին է ընկնում 2008 թվականին, երբ Հայաստանում անց են կացվել նախագահական ընտրություններ: Ասվածն առավել պատկերավոր արտացոլվում է ստորև ներկայացվող գրաֆիկական պատկերում (տե՛ս նկար 1-ը):

Նկար 1

**ՀՀ-ում 2004-2013 թթ. գրանցված
ընտրական հանցագործությունների շարժընթացը**



Այս առումով հարկ ենք համարում նշել, որ արձանագրված թվային ցուցանիշներում, բնականաբար, տեղ չեն գտել լատենտային (պաշտոնական վիճակագրությանն անհայտ մնացած, չգրանցված) հանցավոր արարքների վերաբերյալ տվյալները: Մինչդեռ, օրենքով սահմանված կարգով վերջիններիս գրանցումը կարող էր էականորեն փոխել թե՛ քննարկվող հանցագործությունների շարժընթացը և կառուցվածքը բնութագրող վիճակագրական պատկերը, և թե՛ դրա հիման վրա կատարվող եզրահանգումները:

Բացի այդ, անհրաժեշտ է առանձնահատուկ ընդգծել, որ 2008 թ.-ից սկսած Հայաստանի Հանրապետությունում իրականացվող լայնամասշտաբ դատաիրավական բարեփոխումների արդյունքում էականորեն բարելավվել է նաև նախկինում լատենտային մնացող հանցագործությունների գրանցման-հաշվառման վիճակը, որի արդյունքում բնականորեն աճել է 2008 թ.-ին և հետագա տարիներին կայացած համապետական ընտրությունների ընթացքում գրանցված՝ ընտրական գործընթացներին առնչվող հանցագործությունների թվաքանակը:

Քննարկվող հանցագործությունների միտումներին առնչվող հիմնախնդիրների կապակցությամբ առանձին հետաքրքրություն են ներկայացնում նաև 2004-2013թթ. ՀՀ-ում գրանցված ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունների կառուցվածքի (ըստ որոշակի հանցակազմերի բաշխվածության) վերաբերյալ վիճակագրական տվյալները (տե՛ս աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2

**Ընտրական հանցագործությունների կառուցվածքն
ըստ ՀՀ քր. օր.-ի հոդվածների**

Հոդված 149	Հոդված 150	Հոդված 152	Հոդված 153	Հոդված 154 ²	Ընդամենը
24	26	1	30	13	94

Ներկայացված աղյուսակի վերլուծությունից նախ և առաջ կարելի է հետևություն անել, որ քննարկվող ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել են ՀՀ քրեական օրենսգրքի՝ ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունների համար պատասխանատվություն սահմանող տասներկու հոդվածներից միայն հինգով նախատեսված հանցագործություններ: Մասնավորապես, խոսքը հետևյալ հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող հոդվածների մասին է՝

1) ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու (հոդված 149),

2) ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու (հոդված 150),

3) ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելու (հոդված 152),

4) մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու (հոդված 153),

5) ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելու (հոդված 154²):

Բացի այդ, քննարկվող հանցագործությունների մեծամասնությունը (ավելի քան 67%-ը) բաժին է ընկնում քրեական օրենսգրքի հոդվածներ 149-ով (24 կամ՝ 25,5%), 150-ով (26 կամ՝ 27,7%) և 154²-ով (13 կամ՝ 13,8%) նախատեսված հանցագործություններին: Ընդ որում, վերոհիշյալ հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննությունը, ինչպես արդեն նշվել է, իրականացնում է ՀՀ հատուկ քննչական ծառայությունը:


Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 154²-ով նախատեսված բոլոր տասներեք հանցագործություններն էլ, ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների, հան-

դիսացել են քննարկվող հոդվածի 2-րդ մասով սահմանված հանցավոր արարքներ: Այսինքն, թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրությունների մասնակցելու կամ ընտրությունների մասնակցելուց հրաժարվելու համար թեկնածուներից անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք ստանալու ոչ մի դեպք նշված ժամանակահատվածում պաշտոնապես չի արձանագրվել:

Հարկ է նշել նաև, որ վերը նշված հանցագործություններին հաջորդում են ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 153-ով (30 կամ՝ 31,9%) և 152-ով (1 կամ՝ 1,1%) նախատեսվածները: Ընդ որում, մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու (քր. օր.-ի հոդված 153-ով նախատեսված) դեպքերի մասնաբաժինը քննարկվող հանցագործությունների կառուցվածքում ամենամեծն է: Մասնավորապես, ՀՀ-ում 2004-2013 թթ. գրանցված ընտրական գործընթացների հետ կապված բոլոր հանցագործությունների շուրջ մեկ երրորդը կազմում են հենց նշված հոդվածով նախատեսված հանցավոր արարքները:

Ասվածն առավել պատկերավոր արտացոլվում է ստորև ներկայացվող գրաֆիկական պատկերում (տե՛ս նկար 2-ը):


Մինևույն ժամանակ, ըստ հոդվածի մասերի (կետերի) ՀՀ քր. օր.-ի հոդված 149-ով (ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը) նախատեսված հանցագործությունների դեպքերի բաշխման կապակցությամբ առկա է հետևյալ պատկերը: Տվյալ հոդվածով պատասխանատվություն առաջացնող հանցագործությունների 41,7%-ը կազմում են հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (զուգորդված բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով), 29,2%-ը՝ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (մի խումբ անձանց կողմից), 20,8%-ը՝ հոդվածի 1-ին մասով և 8,3%-ը՝ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (պաշտոնեական դիրքն օգտագործելով) նախատեսված հանցավոր արարքները (տե՛ս աղյուսակ 3-ը):

Նկար 2**Ընտրական հանցագործությունների կառուցվածքն
ըստ ԳԳ քր. օր.-ի հոդվածների**Աղյուսակ 3**ԳԳ քր. օր.-ի հոդված 149-ով նախատեսված
հանցագործության դեպքերի բաշխվածությունն ըստ հոդվածի
մասերի, կետերի**

Ընդամենը	Մաս 1	Մաս 2, կետ 3	Մաս 2, կետ 4	Մաս 2, կետ 5
24	5	10	2	7

Ասվածն առավել պատկերավոր արտացոլվում է ստորև
ներկայացվող գրաֆիկական պատկերում (տե՛ս նկար 3-ը):

**ՀՀ քր. օր.-ի հոդված 149-ով նախատեսված
հանցագործության
դեպքերի բաշխվածությունն ըստ հոդվածի մասերի,
կետերի**



Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև քննարկվող հանցագործությունների՝ ըստ ՀՀ վարչական շրջանների բաշխվածության վերաբերյալ տվյալները: Այս առումով պետք է նշել, որ ընտրական հանցագործությունների առավել բարձր ակտիվությամբ աչքի են ընկնում Երևանը (23,8%), ինչպես նաև Վարդենիսը (9,5%), Գյումրին և Մարտունին (6,3-ական %), Չարենցավանը, Իջևանը, Գավառը (4,8-ական %) և Վայքը, Դիլիջանը, Արմավիրն ու Հրազդանը (3,2-ական %):

Դժվար չէ նկատել, որ ընտրական հանցագործությունների առավել մեծ մասնաբաժինը բնութագրական է մայրաքաղաքին: Երևան քաղաքում գրանցված ընտրական հանցագործությունների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների արտացոլված է ստորև ներկայացվող աղյուսակում (տե՛ս աղյուսակ 4-ը):

Աղյուսակ 4

**Երևան քաղաքում գրանցված ընտրական
հանցագործությունների
բաշխվածությունն ըստ վարչական շրջանների**

Շենգավիք	Մաշտոց	Արաբկիր	Էրեբունի	Մալաթիա	Կենտրոն	Քանաքեռ- Զեյթուն	Ընդամենը Երևանում	Ընդամենը ՀՀ-ում
5	3	9	3	11	3	1	35	94

Ներկայացված աղյուսակից հետևում է, որ քննարկվող ժամանակահատվածում ընտրական հանցագործություններ են գրանցվել Երևանի վարչական շրջաններից միայն յոթում: Ընդ որում, Մալաթիայում արձանագրվել է Երևան քաղաքում կատարվածների մեծամասնությունը (11-ը կամ 31,4%-ը), իսկ ընդհանուր առմամբ հանրապետությունում կատարվածների 11,7%-ը: Դրան հաջորդում է Արաբկիր համայնքը, որտեղ քննարկվող ժամանակաշրջանում գրանցվել է ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունների 9 դեպք (կամ՝ Երևանում գրանցվածների 25,7%-ը և հանրապետությունում գրանցվածների 9,6%-ը): Այսինքն, Մալաթիան և Արաբկիրն աչքի են ընկնում ոչ միայն մայրաքաղաքում, այլև ընդհանուր առմամբ ՀՀ-ում ընտրական գործընթացների հետ կապված հանցանքների առավել հաճախ կատարումով (ընդհանուր առմամբ՝ Երևանում գրանցվածների 51,7%-ը և հանրապետությունում գրանցվածների 21,3%):


Միևնույն ժամանակ պետք է նշել, որ քննարկվող հանցագործությունների կապակցությամբ նվազագույն ցուցանիշը գրանցվել է Քանաքեռ Զեյթունում (1-ը կամ՝ Երևանում գրանցվածների 2,9%-ը և հանրապետությունում գրանցվածների 1,1%-ը): Գրանցված դեպքերի առավել մեծ քանակով վերջինիս գերազանցում են Մաշտոցը, Էրեբունին և Կենտրոնը (3-ական դեպք

կամ Երևանում գրանցվածների 8,6-ական %-ը և հանրապետությունում գրանցվածների 3,2-ական %-ը): Ինչ վերաբերում է Շենգենի համայնքին, ապա այստեղ քննարկվող ժամանակահատվածում գրանցվել է ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունների 5 դեպք (կամ Երևանում գրանցվածների 14,3%-ը և հանրապետությունում գրանցվածների 5,3%-ը):

Վերոհիշյալ ցուցանիշներն առավել պատկերավոր արտացոլված են ստորև ներկայացվող գրաֆիկական պատկերում (տե՛ս նկար 4-ը):

Նկար 4

Երևան քաղաքում գրանցված ընտրական հանցագործությունների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների



Հայաստանի Հանրապետությունում 2004-2013 թթ. կատարված ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունների շարժընթացի բնութագրման առումով կարևորվում

են նաև համապատասխան քրեական գործերի քննության ընթացքի մասին տեղեկությունները:

Մասնավորապես, ստորև ներկայացվող աղյուսակի (տե՛ս աղյուսակ 5-ը) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2004-2013 թթ. հարուցված քրեական գործերի գերակշռող մեծամասնությունը (65-ը կամ՝ 69,1%) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, որոնցով հետագայում կայացվել են մեղադրական դատավճիռներ: Միևնույն ժամանակ նույն աղյուսակից հետևում է, որ մի շարք դեպքերում հանցանք կատարած անձինք տարբեր հիմքերով ազատվել են քրեական պատասխանատվությունից: Այսպես, հարուցված քրեական գործերից 7-ի (կամ՝ 7,4%-ի) դեպքերում հանցանք կատարած անձն ազատվել է քրեական պատասխանատվությունից գործուն զղջալու և 1-ի (կամ՝ 1,1%-ի) դեպքում՝ իրադրության փոփոխության հետևանքով:

Աղյուսակ 5

Տեղեկություններ 2004-2013 թթ. գրանցված ընտրական հանցագործությունների

վերաբերյալ քրեական գործերի քննության ընթացքի մասին

Ուղարկվել է դատարան (1 դեպք վերաորակվել է քր. օր.-ի հոդված 153-ից 150-ի)	65
Ազատվել է քրեական պատասխանատվությունից գործուն զղջալու հիմքով	7
Չանցանք կատարած անձը չի հայտնաբերվել	10
Ազատվել է քրեական պատասխանատվությունից իրադրության փոփոխման հիմքով	1
Կարճվել է հանցակազմի բացակայությամբ	8
Գործի քննությունն ընթացքի մեջ է	3
Ընդամենը գրանցվել է	94

Հարկ է նշել նաև, որ քննարկվող հանցագործությունների վերաբերյալ հարուցված քրեական գործերից 8-ը (կամ՝ 8,5%-ը) կարճվել են հանցակազմի բացակայության հիմքով, իսկ դրանցից 3-ի (կամ՝ 3,2%-ի) վերաբերյալ քրեական գործերով գործի քննությունն ընթացքի մեջ է:

Այս առումով, սակայն, որոշակի մտահոգության տեղիք են տալիս տեղեկություններն այն մասին, որ ընտրական գործընթացների հետ կապված գրանցված հանցագործությունների 10-ի (կամ՝ 10,6%-ի) դեպքերում հանցանք կատարած անձինք չեն հայտնաբերվել:

Այսպիսով, ՀՀ-ում 2004-2013 թթ. ընթացքում ընտրական գործընթացների հետ կապված գրանցված հանցագործությունների վիճակի, կառուցվածքի և շարժընթացի վերլուծությունը ցույց տվեց, որ ներկայումս հանրապետությունում անհրաժեշտ է մշակել և իրականացնել քննարկվող հանցավոր արարքների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված կոնկրետ միջոցառումներ: Այս առումով, կարծում ենք, որոշակի համեստ ներդրում կարելի է համարել նաև գիտամեթոդական սույն ձեռնարկի պատրաստումը և հրապարակումը:

2. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ

2.1. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը (քր. օր.-ի հոդված 149)

Հոդված 149. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը

1. Քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք՝

1) կատարվել են գույքին վնաս պատճառելու սպառնալիքով,

2) կատարվել են նյութապես շահագրգռելով,

3) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

**4) կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,
5) կատարվել են մի խումբ անձանց կողմից,
6) զուգորդվել է անձին ազատությունից զրկելով՝
պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից մինչև հինգ տարի
ժամկետով:**

ՀՀ քր. օր.-ի հոդված 149-ը պատասխանատվություն է սահմանում քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացումը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքները խոչընդոտելու, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացումը խոչընդոտելու համար:

Այս իմաստով պետք է նշել, որ ընտրությունների և հանրաքվեների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ ընտրական օրենսգրքով, ինչպես նաև «Հանրաքվեի մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքներով:

Քննարկվող հանցագործության **օբյեկտը** Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի և ընտրական հանձնաժողովների աշխատանքների ու ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների ազատ իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Տվյալ հանցագործության **օբյեկտիվ կողմը** երկընտրելի է և բնութագրվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կամ մի քանիսի կատարմամբ՝

- 1) քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացումը խոչընդոտելով,
- 2) ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքները խոչընդոտելով,
- 3) ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի

լիազորությունների իրականացումը խոչընդոտելով,

4) նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացումը խոչընդոտելով:

Խոչընդոտելը նշված բոլոր դեպքերում նշանակում է ցանկացած եղանակով որոշակի արգելքներ, խոչընդոտներ ստեղծել: Իսկ տվյալ արարքի կատարման կոնկրետ դրսևորումը բացահայտելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է մանրամասնորեն վերլուծել ընտրությունների կամ հանրաքվեի նախապատրաստման, կազմակերպման և անցկացման կանոնները կարգորոշող համապատասխան նորմատիվ փաստաթղթերը:

Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու **իրավունքի ազատ իրականացում** ասելով՝ պետք է հասկանալ անձի կողմից իր ներքին համոզմունքով, իր պատկերացումների և աշխարհայացքի, քաղաքական նախասիրությունների շրջանակներում ընտրությունների կամ հանրաքվեի ընթացքում այս կամ այն թեկնածուի, կուսակցության կամ հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սեփական կարծիքը, վերաբերմունքը քվեարկելու միջոցով ազատորեն արտահայտելու հնարավորությունից օգտվելը:

Խոչընդոտելը տվյալ դեպքում կարող է դրսևորվել տարբեր կերպ և, բնականաբար, սկզբունքորեն անհնար է կանխատեսել կամ փորձել սպառիչ թվարկել դրա դրսևորման հնարավոր բոլոր տարբերակները: Ամեն դեպքում, խոչընդոտելը ենթադրում է այնպիսի գործողությունների կատարում, որոնք նպատակ ունեն տարբեր միջոցներով ազդել քննարկվող իրավունքների ազատ իրականացման վրա այնպես, որ ընտրողը կամ հանրաքվեին մասնակցողը հնարավորություն չունենա ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի պահպանմամբ մասնակցել համապատասխան գործընթացին: Օրինակ՝ երբ հանցավորը, ստույգ իմանալով, որ քաղաքացին ցանկանում է ընտրել իր համար ոչ նախընտրելի թեկնածուի, որևէ կերպ (բռնություն գոր-

ծաղրելով, ազատությունից զրկելով, խաբեությամբ և այլն) արգելափակում է ընտրատեղամաս նրա մուտք գործելը: Ընդ որում, քննարկվող հանցակազմի առկայության համար նշանակություն չունի, թե երբ կամ որտեղ է դրսևորվել խոչընդոտելու փաստը՝ ընտրատեղամաս այցելելի՞ս, թե՞ հենց ընտրատեղամասում, քվեախցիկում, քվեատուփի մոտ և այլն:

Միևնույն ժամանակ, անհամաձայնության տեղիք է տալիս քննարկվող իրավական դրույթի օրենսդրական ձևակերպումը: Բանն այն է, որ օրենսդիրը, փաստորեն, քրեաիրավական պաշտպանության է ենթարկել միայն ՀՀ քաղաքացու ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի ազատ իրականացման հետ կապված հասարակական հարաբերությունները: Մինչդեռ, ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 2-ի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունք ունեն մասնակցություն չունեցող անձինք, ովքեր համայնքի բնակչության ռեզիստրում մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում ունեն: Այսինքն, տվյալ դեպքում ընտրություններին մասնակցում են մասնակցության չհանդիսացող անձինք: Ուստի, նրանց ընտրական իրավունքների ազատ իրականացումը ևս պետք է ստանա իր համարժեք քրեաիրավական պաշտպանությունը: Հետևաբար, առավել նպատակահարամար կլինի «քաղաքացու» բառը փոխարինել «անձի» կամ «ընտրողի» բառով՝ ընտրությունների բնականոն ընթացքի կարգավորման առավել համապարփակությունն ապահովելու նպատակով:

Ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքները խոչընդոտելու էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է առաջին հերթին վերլուծել այդ աշխատանքները կանոնակարգող համապատասխան իրավական ակտերի դրույթները: Վերջիններս տեղ են գտել ոչ միայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում, «Հանրաքվեի մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում, այլև Կենտրոնական ընտրական հանձնաժո-

ղովի նորմատիվ որոշումներում:⁶

Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ տվյալ դեպքում ընտրական հանձնաժողով ասելով՝ պետք է հասկանալ վերոհիշյալ օրենսդրական ակտերով նախատեսված բոլոր ընտրական և հանրաքվեի հանձնաժողովները: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 34-ի 1-ին մասի համաձայն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և Տեղամասային ընտրական հանձնաժողովներ: Համանման հանձնաժողովների կազմավորման համակարգեր են նախատեսված նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 10-րդ, ինչպես նաև «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածներով: Հետևաբար, քննարկվող հանցակազմի առկայության իմաստով որևէ նշանակություն չունի, թե կոնկրետ որ հանձնաժողովի աշխատանքներն են խոչընդոտվել:

Հանձնաժողովի աշխատանքներին խոչընդոտելը կարող է կատարվել տարբեր եղանակներով: Օրինակ՝ հանձնաժողովի նիստերին դահլիճ մուտք գործելով և այնպիսի գործողություններ կատարելով, որոնց հետևանքով հանձնաժողովի աշխատանքը խափանվում է, կամ հանձնաժողովի անդամների մուտքը հանձնաժողովի աշխատանքների համար նախատեսված վայրեր մուտք գործելն արգելափակվում է, այլ պայմաններ են ստեղծվում, որոնց հետևանքով հանձնաժողովի աշխատանքները տվյալ պահին անհնարին են դառնում կամ ոչ լիարժեք են իրականացվում և այլն:

Ընտրական կամ հանրաքվեի **հանձնաժողովի անդամի լիա-**

⁶ Քննարկվող որոշումները, օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց և Կենտրոնական ընտրական հանձնաժողովում մուտքագրվելուց հետո, համապետական ընտրությունների ժամանակահատվածում նույն օրը, իսկ մյուս ընտրությունների դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, տեղադրվում են ԿԸՀ համացանցային կայքէջում՝ <http://elections.am>:

գորություններ ասելով՝ պետք է հասկանալ այն իրավունքների և պարտականությունների ամբողջությունը, որոնք այդ անձանց տրվել են ընտրական գործընթացների բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ: Այսպես, օրինակ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 67-ի 8-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն ստորագրելու փաթեթների վրա կամ սեփական դրոշմով դրոշմելու փաթեթները: Այս առումով լիազորության իրականացման խոչընդոտ կարող է դիտվել այն իրավիճակը, երբ հանձնաժողովի անդամը ցանկանում է ստորագրել այդ փաթեթները, սակայն վստահված անձանցից որևէ մեկը մոտենում, բռնում է նրա ձեռքը և արգելում մոտենալ դրանց: Այլ կերպ ասած, խոչընդոտելու իմաստով տվյալ դեպքում պետք է հասկանալ բոլոր այն գործողությունները, որոնք ուղղված են վերոհիշյալ լիազորությունների կատարման կասեցմանը, ընդհատմանը, արգելակմանը, արհեստական պատնեշների են ստեղծում դրանք ժամանակին, պատշաճորեն և անխափան իրականացնելու համար:

Նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների պարագայում ևս պետք է հասկանալ այն իրավունքների և պարտականությունների ամբողջությունը, որոնք այդ անձանց տրվել են ընտրական գործընթացների բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ:

Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ ընտրական նախկին օրենսգրքում սահմանված էր դրույթ, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առնվազն 100 քաղաքացի կարող են ձևավորել Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրելու համար նախաձեռնող խումբ: Ընտրական գործող օրենսգրքում ընտրություններին թեկնածուներ առաջադրելու նախաձեռնող խմբերի ձևավորման ինստիտուտը չի պահպանվել: Հետևաբար, նման խմբի անդամի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու և դրա համար քրեական պատասխանատվություն սահմանելու մասին խոսք լինել չի կարող: Նույնը վերաբե-

րում է նաև կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի լիազորած անձին: Ուստի, անհրաժեշտ է ՀՀ քր. օր.-ի հոդված 149-ում փոփոխություն կատարել՝ դրա դիսպոզիցիայի տեքստից հանելով «նախաձեռնող խմբի անդամ» և «կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձ» հասկացությունները:

ՀՀ քր. օր.-ի քննարկվող հոդվածով նախատեսված **հանցակազմը ձևական է**. հանցագործությունն ավարտված է համարվում քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացումը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքները, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացումը ցանկացած եղանակով **խոչընդոտելու պահից**:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցաբար խոչընդոտի քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացումը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքները, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացումը:

Այս հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

Ընտրական իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքները կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացումը խոչընդոտելու առավել վտանգավոր տեսակները նախատեսված են քր. օր.-ի հոդված 149-ի **երկրորդ մասով**: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն են առաջացնում նույն հոդվածի

առաջին մասով նախատեսված արարքները, որոնք՝

- 1) կատարվել են գույքին վնաս պատճառելու սպառնալիքով,
- 2) կատարվել են նյութապես շահագրգռելով,
- 3) կատարվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- 4) կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,
- 5) կատարվել են մի խումբ անձանց կողմից,
- 6) զուգորդվել են անձին ազատությունից զրկելով:

Գույքին վնաս պատճառելու սպառնալիքն ընտրողի, ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի հոգեկանի վրա որոշակի ճնշման գործադրումն է՝ քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքը, ինչպես նաև նշված անձանց լիազորությունների իրականացումը խոչընդոտելու նպատակով: Ընդ որում, նշված սպառնալիքը պետք է իրական լինի: Այսինքն՝ անհրաժեշտ է այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգի առկայությունը:

Նյութապես շահագրգռելը («ընտրակաշառք տալը») ընտրողին, ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամին, թեկնածուին կամ նրա վստահված անձին, դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձին դրամական կամ այլ նյութական վարձատրություն կամ վարձատրելու խոստում տալն է՝ ընտրական իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքները կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացումը խոչընդոտելու նպատակով: Օրինակ՝ երբ նյութապես շահագրգռելով՝ քաղաքացուց պահանջում են չներկայանալ քվեարկության կամ քվեարկել իրենց մատնանշած թեկնածուի օգտին կամ հրաժարվել որպես տվյալ թեկնածուի վստահված անձ գրանցվելուց և այլն:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ արարքը տվյալ ժան-

րացնող հանգամանքի առկայությամբ որակելն իրավակիրառ պրակտիկայում կարող է որոշակի բարդություններ առաջացնել: Բանն այն է, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 154²-ի 2-րդ մասով պատասխանատվություն է սահմանվում ընտրողին թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելու համար, որը կատարվել է գույքին վնաս պատճառելու սպառնալիքով, անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք տալով, բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով: Դժվար չէ նկատել, որ տվյալ դեպքում գործ ունենք քրեական օրենսգրքի Հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության հետ: Հետևաբար, ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի ազատ իրականացմանը նյութապես շահագրգռելով խոչընդոտելը բոլոր դեպքերում պետք է որակել ՀՀ քր. օր.-ի ոչ թե հոդված 149-ի, այլ 154²-ի 2-րդ մասով, ինչն անիմաստ է դարձնում հոդված 149-ով նման ծանրացնող հանգամանք նախատեսելը:

Բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ քր. օր.-ի հոդված 149-ի երկրորդ մասի երկրորդ կետն ընդգրկում է միայն ծեծը, խոշտանգումը, առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը և սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքը: Մնացած դեպքերում արարքը պետք է որակվի համապատասխան հանցագործությունների համակցությամբ:

Ընտրական իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքները կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացումը խոչընդոտելու համար ***պաշտոնական դիրքն օգտագործելը*** կարող է արտահայտվել, օրինակ, անօրինական պարզևատրումների, վարձա-հատուցումների, հավելավճարների տրամադրման մեջ և այլն: Քննարկվող հանցագործության տվյալ տեսակի սուբյեկտ կարող են հանդիսանալ միայն պաշտոնատար անձինք: Իբրև այդպիսիք հասկացվում են՝

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազո-

րությանը իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք.

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ գործերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

Հանցանքը **մի խումբ անձանց կողմից** կատարելու հասկացությունը սահմանված է քր. օր.-ի հոդված 41-ի առաջին և երկրորդ մասերով: Քր. օր.-ի հոդված 149-ի երկրորդ մասի հինգերորդ կետի իմաստով ենթադրվում է արարքի կատարումը հանցավոր խմբի կողմից ինչպես նախնական համաձայնությամբ, այնպես էլ առանց նախնական համաձայնության:

Անձին **ազատությունից զրկելու** հասկացությունը սահմանված է քր. օր.-ի հոդված 133-ով: Այստեղ հարկ է նշել միայն, որ նման դեպքերում արարքը պետք է որակել համապատասխան հանցագործությունների համակցությամբ:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ քննարկվող հանցակազմով նախատեսված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս անհրաժեշտ է՝

- բացահայտել համապատասխան հանձնաժողովի աշխատանքների բնույթը և դրա անդամների լիազորությունների շրջանակը,

- ստուգել՝ արդյոք անձը, ում լիազորությունները ենթադրաբար խոչընդոտվել են, ընտրական գործընթացներում համապատասխան կարգավիճակ ունեցող սուբյեկտ է (թեկնածու, վստահված անձ, դիտորդ, ՁԼՄ ներկայացուցիչ և այլն), թե՞ ոչ,

- պարզել՝ արդյոք տվյալ հանձնաժողովի կամ հանձնաժողովի անդամի և համապատասխան մյուս սուբյեկտների լիազորությունները վաղաժամկետ չեն դադարել,

- բացահայտել՝ կոնկրետ ի՞նչ եղանակով է տվյալ դեպքում իրականացվել խոչընդոտելը,

- ստուգել՝ արդյոք ենթադրյալ հանցանք կատարած անձն այդ արարքը կատարել է սեփական նախաձեռնությամբ, թե՞ այլ անձի (թեկնածուի, որևէ կուսակցության ներկայացուցչի և այլն) դրդմամբ,

- բացահայտել՝ ի՞նչ նպատակներ է հետապնդել և ի՞նչ մղումներով (շարժառիթներով) է գործել հանցավորը,

- պարզել՝ արդյոք արարքը չի պարունակում տվյալ հոդվածով նախատեսված ծանրացնող հանգամանքներ,

- կատարել դեպքի վայրի զննություն՝ խոչընդոտելուն ուղղված գործողությունների հետքերն արձանագրելու համար,

- առգրավել հանձնաժողովի աշխատանքները նկարահանող տեսախցիկների տեսաձայնագրությունները,

- հարցաքննել հանձնաժողովի անդամներին, դեպքին առնչություն ունեցող այլ անձանց՝ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու համար,

- ճանաչման ներկայացնել ենթադրյալ հանցանք կատարած անձին, նրա օգտագործած գործիքները, միջոցները,

- առգրավել հանձնաժողովի աշխատանքները արձանագրող փաստաթղթերը՝ դրանց ընթացքին և ժամանակագրությանը ծանոթանալու համար,

- արարքի բռնությամբ զուգորդված լինելու դեպքերում նշանակել դատաբժշկական փորձաքննություն՝ մարմնական վնասվածքի աստիճանը պարզելու համար և այլն:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ընտրական գործընթացները կարգավորող իրավական ակտերը բավականին ծավալուն են և հազեցած, աչքի են ընկնում բովանդակային առանձնահատկությամբ, իսկ հատկապես վերջին տարիներին բազմիցս ենթարկվել են փոփոխությունների: Ուստի, առավել արդյունավետ կլինի, եթե համապատասխան քննչական գործողություններին իրավակիրառողները ներգրավեն նաև համապատասխան ոլորտի մասնագետների:

2.2. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը (քր. օր.-ի հոդված 150)

Հոդված 150. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը

Հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելը կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքները ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը, քվեատուփ հափշտակելը, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելը, մուտքագրված տվյալները փոփոխելը, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

ՀՀ քր. օր.-ի հոդված 150-ը պատասխանատվություն է սահմանում հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելու կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքներն ակնհայտ սխալ տվյալներով հաստատելու, քվեատուփ հափշտակելու, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելու կամ մուտքագրված տվյալները փոփոխելու, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելու համար:

Տվյալ հանցագործության **անմիջական օբյեկտը** ընտրությունների և հանրաքվեի անցկացումն ապահովող հասարակական հարաբերություններն են, որոնք ուղղված են պետական իշխա-

նության և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը կան ՀՀ քաղաքացիների կողմից անմիջականորեն ժողովրդի իշխանության իրականացմանը: Բնական է, որ այս հանցակազմի դիսպոզիցիայի շրջանակներում ներառվող գործողություններն ամբողջապես միտված են ընտրությունների ողջ բնականոն ընթացքը ձևախեղելուն:

Հանցագործության **առարկան** ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքներ պարունակող փաստաթղթերն են (քվեաթերթիկները, ընտրողների գրանցման ցուցակները, քվեարկության անփոփիչ և անճշտությունների վերաբերյալ արձանագրությունները), որոնց ձևն ու լրացման կարգը սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև քվեատուփն ու համակարգչային համապատասխան տեղեկատվությունը:

Բնարկվող հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքները կեղծելով, որը կարող է դրսևորվել հետևյալ արարքներով՝

1) ձայներն ակնհայտ սխալ հաշվելով,

2) ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքներն ակնհայտ սխալ տվյալներով հաստատելով,

3) քվեատուփի հափշտակելով,

4) համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելով կամ մուտքագրված տվյալները փոփոխելով,

5) որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելով,

6) ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելով:

Ձայներն **ակնհայտ սխալ հաշվելը** նշանակում է քվեարկության արդյունքների դիտավորյալ աղավաղում, որն առաջ է բերում «կողմ» կամ «դեմ» քվեարկած ձայների՝ իրականությանը չհամապատասխանող ավելացում կամ պակասեցում: Դա կա-

րող է արտահայտվել, օրինակ, մեկ թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկը մեկ ուրիշ թեկնածուի օգտին հաշվելով, անցանկալի քվեաթերթիկների վրա լրացուցիչ նշումներ կատարելով կամ դրանք թաքցնելով, անվավեր քվեաթերթիկներն այս կամ այն թեկնածուի օգտին հաշվելով և այլն:

Չանրաքվեի կամ ընտրությունների արդյունքներն **ակնհայտ սխալ հաստատել** արտահայտվում է ընտրությունը կամ հանրաքվեն օրենքի խախտմամբ դիտավորությամբ կայացած կամ չկայացած, այս կամ այն թեկնածուին ընտրված կամ չընտրված հայտարարելով և այլն:

Քվեատուփի հափշտակելը կարող է որակվել քր. օր.-ի հոդված 150-ով միայն այն դեպքում, եթե դա կատարվել է հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները կեղծելու նպատակով: Չակառակ պարագայում, համապատասխան հատկանիշների առկայությամբ, արարքը կարող է որակվել քր. օր.-ի հոդված 149-ով: Ուստի կարծում ենք, որ տվյալ դեպքում ճիշտ կլիներ քր. օր.-ի հոդված 150-ում հատուկ նշում կատարել քվեատուփի հափշտակելու կոնկրետ նպատակի՝ ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու վերաբերյալ:

Քննարկվող հոդվածի իմաստով **համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրել կամ մուտքագրված տվյալները փոփոխել** ասելով՝ պետք է հասկանալ այն դեպքերը, երբ նման գործողությունները կատարվում են ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու, աղավաղելու, իրականությանը չհամապատասխանող տեսքով ներկայացնելու նպատակով: Չակառակ պարագայում արարքը չի կարող որակվել քր. օր.-ի հոդված 150-ով: Չետևաբար, քննարկվող հոդվածում, ինչպես և քվեատուփի հափշտակելու դեպքում, նպատակահարմար է հատուկ նշում կատարել արարքի կոնկրետ նպատակի վերաբերյալ:

Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու **այլ եղանակներ** կարող են համարվել, օրինակ, քվեարկության արդյունքների վրա ազդելու նպատակով պահանջվածից ավելի տպագրված և այս կամ այն թեկնածուի օգտին նախապես

քվեարկված քվեաթերթիկներ լցոնելը, անցանկալի թեկնածուի օգտին քվեարկված քվեաթերթիկները ոչնչացնելը և այլն:

Ղնտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմինների՝ սահմանված ժամկետում չներկայացնելը քրեական պատասխանատվություն է առաջացնում, եթե դա կատարվել է ***ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու նպատակով***:

ՀՀ քր. օր.-ի հոդված 150-ով նախատեսված ***հանցակազմը ձևական է***. հանցագործությունն ավարտված է համարվում հանրաքվեի կամ ընտրության արդյունքները որևէ եղանակով կեղծելու պահից: Նշված արդյունքները կեղծելու համար որոշակի պայմաններ ստեղծելը, միջոցներ ձեռնարկելը, ինչը հետագայում խափանվել է, որակվում է որպես հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները կեղծելու նախապատրաստություն:

Սուբյեկտիվ կողմից քննարկվող հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցաբար, ակնհայտորեն կեղծի հանրաքվեի կամ ընտրության արդյունքները:

Հանցագործության ***սուբյեկտը*** հատուկ է՝ տեղամասային, ընտրատարածքային կամ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ հանդիսացող յուրաքանչյուր անձ, ով այս կամ այն եղանակով կեղծել է հանրաքվեի կամ ընտրության արդյունքները: Այլ անձանց գործողությունները, ովքեր այս կամ այն կերպ աջակցել են հանրաքվեի կամ ընտրության արդյունքները կեղծելուն, կարող են որակվել որպես քր. օր.-ի հոդված 150-ով նախատեսված հանցագործության օժանդակություն:

Ամփոփելով ասվածը՝ մշենք, որ քննարկվող հանցակազմով նախատեսված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս հաջորդաբար գնահատման (բացահայտման) են ենթակա ելակետային նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները.

- կոնկրետ ո՞ր արարքում է դրսևորվել ընտրությունների կամ քվեարկության արդյունքների կեղծումը,

- ինչպիսի՞ ապացույցներով է հիմնավորվում ընտրության

կամ հանրաքվեի արդյունքներին վերաբերող սխալ տվյալները համակարգչային միասնական տեղեկատվական համակարգ ներառելը,

- կոնկրետ ո՞ր հանգամանքներն են վկայում անձի՝ հանրաքվեի կամ ընտրության արդյունքները կեղծելու հատուկ նպատակի մասին:

- կոնկրետ ի՞նչն է համարվել հանցագործության առարկա (քվեաթերթի՞կը, ընտրողների գրանցման ցուցա՞կը, քվեարկության անփոփիչ և անճշտությունների վերաբերյալ արձանագրություններ՞ը, թե՞ քվեատուփը կամ համապատասխան համակարգչային տեղեկատվությունը),

- կոնկրետ ո՞ր փաստաթղթերի վրա է դրսևորվել ընտրակեղծիքը (նշված փաստը կարող է հաստատվել համապատասխան ծառայողի հարցաքննության արձանագրություններով),

- ի՞նչն է պատճառ հանդիսացել, որ ընտրական փաստաթղթերը չեն ներկայացվել վերադաս ընտրական մարմիններին և այլն:

2.3. Ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը (քր. օր.-ի հոդված 151)

Հոդված 151. Ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը

Ընտրողներին ապակողմնորոշելու նպատակով ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

ՀՀ քր. օր.-ի հոդված 151-ը պատասխանատվություն է սահմանում ընտրողներին ապակողմնորոշելու նպատակով ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելու համար:

Հանցագործության **հիմնական անմիջական օբյեկտը** ընտրությունների անցկացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: **Լրացուցիչ անմիջական օբյեկտի** դերում տվյալ դեպքում հանդես են գալիս թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) որոշակի անդամների պատիվն ու արժանապատվությունը:

Օբյեկտիվ կողմից քննարկվող հանցագործությունը բնութագրվում է ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելով:

Քննարկվող հանցակազմի իմաստով՝

– **ընտրությունների անցկացման ընթացքը** ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից թեկնածուների կամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի մեկնարկի պահից մինչև ընտրողի՝ քվեարկության խցիկ մտնելը ընկած ժամանակահատվածն է.

– **թեկնածու** ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետում որպես թեկնածու գրանցված ֆիզիկական անձն է.

– **կուսակցություն (կուսակցությունների դաշինք)** է համարվում ոչ միայն ընտրություններին մասնակցելու նպատակով ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետում իր ընտրական ցուցակը գրանցած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը), այլև ՀՀ Սահմանադրությանը և «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան ստեղծված և գործող ցանկացած այլ կուսակցություն, որը սատարում է ընտրություններին մասնակցող որևէ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքը):

Ձրպարտչական են համարվում այն տեղեկությունները, որոնք ակնհայտորեն սուտ են (չեն համապատասխանում իրականությանը) և նվաստացնում են թեկնածուի պատիվն ու արժանապատվությունը կամ արատավորում նրա կամ որոշակի կուսակցության (կուսակցությունների դաշինքի) բարի համբավը: Այդ տեղեկությունները կարող են վերաբերել թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) որևէ անդամի անձին, նրանց գործունեությանը և այլն:

Նման տեղեկություններ **տարածելը** որևէ եղանակով (բանավոր, գրավոր, տպագրական, բազմացնող սարքերի օգտագործման և այլն) այդ տեղեկությունները գոնե մեկ անձի հաղորդելն է:

Հարկ ենք համարում նշել նաև, որ քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի օրենսդրական ներկայիս ձևակերպումը որոշակի տարակուսանքի տեղիք է տալիս: Բանն այն է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 45-ի 10-րդ մասի 4-րդ պարբերության («Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է») համաձայն՝ տվյալ հանցակազմն առկա կլինի միայն այդ դեպքում, եթե զրպարտչական տեղեկություններ են տարածվել միաժամանակ և՛ թեկնածուի, և՛ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ: Քննարկվող հանցակազմի ընդհանուր տրամաբանությունը, սակայն, ակնհայտորեն հանգում է նրան, որ տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացումը հնարավոր է ինչպես թեկնածուի և կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ միաժամանակ, այնպես էլ միայն թեկնածուի կամ միայն կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելով:

Բացի այդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի նույն հոդվածի 10-րդ մասի 6-րդ պարբերության համաձայն՝ «Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված բոլոր պայմաններից առնվազն մեկի առկայությունը»: Ուստի, կարծում ենք, միանգամայն ճիշտ կլիներ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 151-ով ամրագրված «թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը» ձևակերպման մեջ «թեկնածուի» և «կուսակցության» բառերի միջև եղած ստորակետը («,») փոխարինել «կամ» շաղկապով:

ՀՀ քր. օր.-ի հոդված 151-ով նախատեսված **հանցակազմը ձևական է**: հանցագործությունն ավարտված է համարվում ընտ-

րությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելու պահից:

Սուբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այդ մասին է վկայում նաև քննարկվող հոդվածով արարքի կատարման հատուկ **նպատակի** ընտրողների ապակողմնորոշման նախատեսումը:

Ընտրող ասելով՝ տվյալ դեպքում պետք է հասկանալ ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 30-ի 1-ին մասով) և ՀՀ ընտրական օրենսգրքով (հոդված 2-ով) ամրագրված՝ ընտրելու իրավունք ունեցող ցանկացած ֆիզիկական անձի: Ընդ որում, ընտրողների ցուցակում ընդգրկված չլինելը որևէ կերպ չի ազդում ընտրելու իրավունք ունեցող անձի՝ քննարկվող հանցակազմի իմաստով «ընտրող» համարվելու վրա, ինչը պայմանավորված է այդ ցուցակում վերականգնվելու նրա իրավական հնարավորությամբ:

Ապակողմնորոշելու նպատակը տվյալ դեպքում հասկացվում է որպես ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելու միջոցով ընտրողների գիտակցության վրա այնպիսի ազդեցություն գործելու ցանկություն, որն, ըստ նման տեղեկություններ տարածող անձի, կարող է հանգեցնել ընտրողի՝ ընտրությունների հետ կապված վարքագծի փոփոխության:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

Միևնույն ժամանակ ՀՀ քր. օր.-ի հոդված 151-ով նախատեսված հանցագործությունն անհրաժեշտ է տարբերել քաղաքացիաիրավական պատասխանատվությունն առաջացնող զրպարտությունից: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ զրպարտչական տեղեկություններ են տարածվում թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) որևէ ան-

դամի վերաբերյալ: Սահմանազատման հիմնական չափանիշը անձի դիտավորության ուղղվածությունն է: Մասնավորապես, եթե բացահայտվի, որ անձն ընդամենը ցանկացել է նվաստացնել կոնկրետ մարդու պատիվն ու արժանապատվությունը, արատավորել նրա բարի համբավը՝ նպատակ չունենալով ապակողմնորոշելու ընտրողներին, արարքը չի կարող որակվել քր. օր.-ի հոդված 151-ով:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ քննարկվող հանցակազմով նախատեսված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս հաջորդաբար գնահատման (բացահայտման) են ենթակա ելակետային նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները.

- ընտրությունները եղել են տեղակա՞ն, թե՞ համապետական (այս հանգամանքի բացահայտումն անհրաժեշտ է «ընտրելու իրավունք ունեցող անձ» համարվելու հարցը ճիշտ գնահատելու համար),
- կոնկրետ ու՞մ է նպատակ ունեցել ապակողմնորոշելու հանցավորը՝ զրպարտչական տեղեկություններ տարածելով,
- արդյոք համապատասխան ընտրություններում «ընտրող» կարող է համարվել այն անձը, ում հանցավորը ցանկանում է ապակողմնորոշել (օրինակ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 2-ի 1-ին մասի համաձայն՝ ՏԻՄ ընտրությունների ժամանակ, ի տարբերություն համապետականների, ընտրելու իրավունք ունեն մասնա ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձինք, ովքեր մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում ունեն ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեզիստրում),
- արդյոք ընտրողներին ապակողմնորոշելու նպատակով թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ անձի տարածած տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը,
- ինչպիսի՞ իրադրությունում են տարածվել զրպարտչա-

կան տեղեկությունները (օրինակ՝ ուսուցիչը, նպատակ ունենալով միջնորդավորված ձևով ապակողմնորոշելու իր աշակերտների ծնողներին, դասի ժամանակ համապատասխան զրպարտչական տեղեկություններ է տարածում),

- արդյոք զրպարտչական տեղեկություններ տարածելով՝ անձը նպատակ է ունեցել ապակողմնորոշելու ընտրողներին, թե՞ ընդամենը ցանկացել է անվանարկել, նվաստացնել թեկնածուին կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ներկայացուցիչ հանդիսացող անձին, ոտնահարել նրա պատիվն ու արժանապատվությունը, բարի համբավը և այլն:

2.4. Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը (քր. օր.-ի հոդված 152)

Հոդված 152. Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը

1. Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգը խախտելը, դրանք չտրամադրելը կամ սահմանված կարգով դրանք չհրապարակելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

2. Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

ՀՀ քր. օր.-ի հոդված 152-ը պատասխանատվություն է սահմանում ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգը խախտելու, դրանք չտրամադրելու կամ սահմանված կարգով դրանք չհրապարակելու համար:

Տվյալ հանցագործության **անմիջական օբյեկտը** քաղաքացիների ընտրական իրավունքի և պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման՝ օրենքով սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակա-

կան հարաբերություններն են:

Հանցագործության **առարկան** են կազմում ընտրողների ցուցակները, որոնցում ընդգրկվում են ընտրական իրավունք ունեցող ՀՀ բոլոր քաղաքացիները: Այդ ցուցակները մշտապես գործող փաստաթղթեր են, որոնք կազմվում են համայնքներում՝ ըստ ընտրական տեղամասերի: Ընտրողների ցուցակները վերանայվում են յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր և հունիս ամիսներին:

Այս հանցագործության **օբյեկտիվ կողմը** բնութագրվում է՝

1) ընտրողների ցուցակները քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգը խախտելով,

2) ընտրողների ցուցակները քաղաքացիներին և կուսակցություններին սահմանված կարգով չտրամադրելով,

3) ընտրողների ցուցակները սահմանված կարգով չհրապարակելով:

Ընտրողների ցուցակները կազմելու և վարելու կարգն ու պայմանները, դրանք կազմելու համար պատասխանատու անձանց շրջանակը նախատեսված են ՀՀ ընտրական օրենսգրքով:

Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 11-ն ամրագրում է ընտրողների ցուցակների մատչելիությունը, այն է՝ «Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը, բացառությամբ զինվորական մասերում կազմվող, ինչպես նաև ընտրողների ստորագրած ցուցակների, ազատ է ծանոթության համար»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ լիազոր մարմինն ընտրողների ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից 40 օր և 2 օր առաջ տեղադրում է համացանցում: Համացանցում ըստ ընտրական տեղամասերի տեղադրված ընտրողների ցուցակները պետք է ունենան դրանք ներբեռնելու հնարավորություն»:

ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 101-ի 3-րդ մասի համաձայն՝ «Ընտրական տեղամասերը կազմավորվում, և տեղամասային կենտրոնները սահմանվում են քվեարկության օրվանից

ոչ ուշ, քան 25 օր առաջ: Լիազոր մարմինը ընտրողների ցուցակները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ հանձնում է տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին, որը դրանք փակցնում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի վայրում»:

Այս իրավակարգավորումները, փաստորեն, միտված են ապահովելու քաղաքացիներին և կուսակցություններին ընտրողների ցուցակների մատչելիությունն ու հասանելիությունը: Ուստի, համապատասխան պաշտոնատար անձի կողմից վերոնշյալ պարտականությունները չկատարելը կհանգեցնի քաղաքացիների և կուսակցությունների իրավունքների և օրինական շահերի խախտման (դրանով իսկ՝ քրեական պատասխանատվության), քանի որ նրանք տվյալ դեպքում զրկված կլինեն ընտրողների ցուցակներին ծանոթանալու հնարավորությունից:

Քննարկվող **հանցակազմը ձևական է**. հանցագործությունն ավարտված է համարվում վերը նշված գործողություններից որևէ մեկը կատարելու պահից, անկախ որևէ հետևանքից:

Սուբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցի ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելու հանգամանքը:

Այս հանցագործության **սուբյեկտը** հատուկ է՝ ընտրողների ցուցակներ կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձը: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 7-ի համաձայն՝ ընտրողների ցուցակը կազմում է բնակչության պետական ռեգիստրը վարող ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (համապատասխան պաշտոնատար անձը): Լիազոր մարմինը պատասխանատու է ՀՀ ընտրողների ցուցակը նշված օրենքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար: Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ընտրողների ցուցակներ կազմում են նաև քրեակատարողական հիմնարկների, ձերբակալվածներին պահելու վայրերի ղեկավարները և զինվորական մասերի հրամա-

նատարները:

Ընտրողների ցուցակները կազմում և վարում են համայնքների ղեկավարները՝ իրենց պատվիրակված լիազորությունների ուժով: Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները ԿԸԶ-ի սահմանած կարգով վերահսկողություն են իրականացնում ընտրողների ցուցակները կազմելու և վարելու նկատմամբ:

Քննարկվող հոդվածի **երկրորդ մասը** առավել խիստ պատասխանատվություն է սահմանում ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելու համար: Ընտրացուցակներում **կեղծիքներ կատարելը** դրսևորվում է՝ գիտակցաբար դրանցում իրականությանը չհամապատասխանող (կեղծ) տվյալներ մուտքագրելով, այդ ցուցակների իրական պատկերն այլ կերպ աղավաղելով: Օրինակ՝ երբ ընտրական իրավունք ունեցող միևնույն քաղաքացին ընդգրկվում է միաժամանակ ընտրողների երկու կամ ավելի ցուցակներում, կամ երբ այդ ցուցակներում գիտակցաբար ընդգրկվում են մահացած կամ տվյալ համայնքում չգրանցված քաղաքացիներ և այլն: Ընդ որում, համապատասխան պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական լիազորությունները չարաշահելը, որը դրսևորվում է միայն ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելու միջոցով, ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության ուժով որակվում է միայն քր. օր.-ի հոդված 152-ով:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ քննարկվող հանցակազմով նախատեսված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս հաջորդաբար գնահատման (բացահայտման) են ենթակա ելակետային նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները.

- արդյոք ենթադրյալ հանցավորը ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձ է,
- կոնկրետ ինչու՞մ է դրսևորվել սահմանված կարգի հա-

մապատասխան խախտումը,

- կոնկրետ ի՞նչ պարտականություն էր դրված պաշտոնատար անձի վրա, որը նա չի կատարել,

- արդյոք հենց տվյալ պաշտոնատար անձն է պարտականություն ունեցել հրապարակելու ընտրողների ցուցակները,

- կոնկրետ ե՞րբ է ծագել այդ պարտականությունը և ո՞ր պահն է համարվել այն չկատարելու ժամանակ (հանցագործության ավարտման պահ),

- կոնկրետ ինչու՞մ է դրսևորվել կեղծիքների կատարելը (այս հանգամանքը բացահայտելու համար անհրաժեշտ է նշանակել դատաձեռագրաբանական, դատադրոշմակնիքային կամ այլ փորձաքննություն) և այլն:

**2.5. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը
(Քր. օր.-ի հոդված 153)**

**Հոդված 153. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի
փոխարեն քվեարկելը**

Կեղծ տվյալներ հայտնելու, կեղծ փաստաթուղթ ներկայացնելու կամ որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով:

ՀՀ Քր. օր.-ի հոդված 153-ը պատասխանատվություն է սահմանում կեղծ տվյալներ հայտնելու, կեղծ փաստաթուղթ ներկայացնելու կամ որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու համար:

Քննարկվող հանցագործության **անմիջական օբյեկտը** քվեարկության՝ օրենքով սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Օբյեկտիվ կողմից այն բնութագրվում է հանրաքվեի կամ ընտրությունների անցկացման ընթացքում մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելով: Քր. օր.-ի հոդված 153-ը նախատեսում է տվյալ հանցագործության հետևյալ եղանակները՝

- 1) կեղծ տվյալներ հայտնելը,
- 2) կեղծ փաստաթուղթ ներկայացնելը,
- 3) որևէ այլ եղանակ:

Կեղծ տվյալներ հայտնելը համարվում է տվյալ հանցագործության եղանակ, երբ հանցավորը իրականությանը չհամապատասխանող, աղճատված տեղեկություններ հաղորդելով, մոլորության մեջ է զցրում համապատասխան պատասխանատու անձին (օրինակ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի ներկայացուցչին)՝ ընտրողների ցուցակում գրանցվելու և քվեար-

կությանը մասնակցելու նպատակով: Օրինակ՝ երբ արդեն իսկ քվեարկած անձը կրկին ներկայանում է քվեարկության և մեկ ուրիշին վերաբերող տվյալներ հաղորդելով՝ իր անձնագրով կրկին գրանցվում ու մասնակցում է քվեարկությանը:

Կեղծ փաստաթուղթ ներկայացնելը ևս հանդիսանում է քննարկվող հանցագործության եղանակ, եթե դա կատարվում է ընտրողների ցուցակում ապօրինի գրանցվելու և քվեարկությանը մասնակցելու համար: Օրինակ՝ երբ անձը հաստատող կեղծ փաստաթուղթ ներկայացնելով՝ հանցավորը հանդես է գալիս տվյալ տեղամասային ընտրատարածքում ընտրելու իրավունք ունեցող մեկ ուրիշ անձի անվան տակ:

Քննարկվող հանցակազմի իմաստով փաստաթուղթ է համարվում **անձը հաստատող փաստաթուղթը**: ՀՀ Ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ որպես այդպիսին «...համարվում է անձնագիրը (առանց կենսաչափական տվյալների), անձնագրին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից, իսկ զինծառայողների համար՝ զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը, եթե գրանցվում են (քվեարկում են) զինվորական մասի կազմած ընտրողների ցուցակում: Պարտադիր ժամկետային զինծառայողները ծառայությունից օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր արձակված լինելու դեպքում իրենց մշտական բնակության վայրերում քվեարկում են զինվորական գրքույկներով՝ ներկայացնելով նաև ծառայությունից ժամանակավոր արձակված լինելու մասին փաստաթղթի պատճենը»:

Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու **այլ եղանակներ** ասելով՝ հասկացվում է կեղծ տվյալի հայտնում կամ կեղծ փաստաթղթի ներկայացում չհանդիսացող ցանկացած այլ եղանակ: Օրինակ՝ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու համար ընտրական հանձնաժողովի անդամի միջոցով քվեաթերթիկ ստանալը:

Ընդ որում, որպես կանոն, մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը տեղի է ունենում համապատասխան

պատասխանատու անձանց աջակցությամբ: Վերջիններիս գործողությունները համապատասխան հատկանիշների առկայության դեպքում պետք է որակվեն որպես քննարկվող հանցագործության օժանդակություն: Եթե օժանդակությունը դրսևորվում է՝ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելով, վերջինիս արարքը լրացուցիչ պետք է որակվի քր. օր.-ի հոդված 308-ով:

Հարկ ենք համարում նշել նաև, որ, եթե կեղծ տվյալներ հայտնելը կամ կեղծ փաստաթուղթ ներկայացնելը կամ որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկել փորձելը բացահայտվում է, օրինակ, հանձնաժողովի՝ ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամի կողմից՝ ընտրողի ինքնության ստուգման արդյունքում, և հանցավորն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողանում հանցանքն ավարտին հասցնել, ապա արարքը պետք է որակվի որպես քննարկվող հանցագործության փորձ:

ՀՀ քր. օր.-ի հոդված 153-ով նախատեսված հանցակազմը **ձևական է**. հանցագործությունն ավարտված է համարվում մեկից ավելի (առնվազն երկրորդ) անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու պահից:

Սուբյեկտիվ կողմից տվյալ հանցագործությունը բնութագրվում է միայն **ուղղակի դիտավորությամբ**: Այսինքն՝ հանցավորը պետք է գիտակցի մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու հանգամանքը:

Քննարկվող հանցագործության սուբյեկտն ընդհանուր է՝ 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ, ով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն մասնակցել է քվեարկության:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ քննարկվող հանցակազմով նախատեսված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս հաջորդաբար գնահատման (բացահայտման) են ենթակա ելակետային նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները.

- արդյոք հանցանքի կատարման մեջ կասկածվող անձն

ընդհանրապես քվեարկել է,

- արդյոք հանցանքի կատարման մեջ կասկածվողն ընտրական իրավունք ունեցող անձ է, թե՞ ոչ,

- ինչպիսի՞ ապացույցներ են վկայում, որ տվյալ անձը քվեարկել է մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն (դրանասին կարող է վկայել, օրինակ, նույն անձի՝ մեկից ավելի անգամ տեղամասային կենտրոն քվեարկելու նպատակով մուտք գործելը),

- ի՞նչ փաստաթուղթ է կեղծվել մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու նպատակով և այլն:

**2.6. Քվեարկության գաղտնիությունը խախտելը
(քր. օր.-ի հոդված 154)**

Չոդված 154. Քվեարկության գաղտնիությունը խախտելը

Քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով:

ՀՀ քր. օր.-ի հոդված 154-ը պատասխանատվություն է սահմանում քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելու, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելու, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելու, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելու համար:

ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 5-ը սահմանում է. «Քվեարկությունը գաղտնի է: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Քվեարկողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է»: Նույն օրենսգրքի հոդված 65-ի երրորդ մասի համաձայն՝ ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում: Համանման դրույթներ է պարունակում նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ը, որի համաձայն՝ Հանրաքվեն անցկացվում է ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ, իսկ քաղաքացիների կամքի արտահայտման նկատմամբ հսկողությունն արգելվում է:

Տվյալ հանցագործության **անմիջական օբյեկտը** հանրաքվեի կամ ընտրությունների անցկացման ընթացքում քվեարկության գաղտնիության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Օբյեկտիվ կողմից այն բնութագրվում է քվեարկության գաղտնիությունը խախտելուն ուղղված գործողություններով, որոնք դրսևորվում են՝

1) ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելով,

2) քվեարկած քվեաթերթիկը ստուգելով,

3) քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելով,

4) քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելով (օրինակ՝ քվեարկության խցիկում տեսաձայնագրման սարքավորումներ տեղադրելով և այլն):

Ընդհանուր առմամբ քվեարկության **գաղտնիության խախտումը** նշանակում է այնպիսի իրադրության ստեղծում, երբ որևէ այլ անձ հնարավորություն է ունենում հսկողություն իրականացնելու քաղաքացիների կամքի ազատ արտահայտման նկատմամբ: Օրինակ՝ քվեարկության խցիկների բացակայությունը և այլն: Այս յուրահատկությամբ պայմանավորված կարծում ենք, որ առավել ճիշտ կլիներ հոդվածի դիսպոզիցիան այնպես փոխել, որ գաղտնիությունը խախտելու նպատակը վերաբերի միայն քվեարկության խցիկ մուտք գործելուն:

Ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն **հարկադրելը** կարող է դրսևորվել անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով, ընտրողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով, նրան տարբեր խոստումներ տալով կամ նյութապես շահագրգռելով և այլն: Ցանկացած դեպքում, երբ ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը պարունակում է խոշտանգման, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու հատկանիշներ, արարքը պետք է որակվի համապատասխան հանցագործությունների համակցությամբ: Օրինակ՝ երբ հարկադրելը դրսևորվում է ընտրողին խոշտանգելով, արարքը պետք է որակվի քր. օր.-ի հոդվածներ 119-ով և 154-ով:

Հարկ ենք համարում նշել նաև, որ տվյալ հանցակազմում ևս շարադրանքի ընդհանուր տրամաբանությունը և հողվածի դիսպոզիցիայի մեկնաբանությունը, պայմանավորված «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հողված 45-ի 10-րդ մասի 2-րդ պարբերության պահանջով, մտնում են ուղղակի հակասության մեջ: Ուստի, կարծում ենք, որ արդարացված կլիներ ՀՀ քրեական օրենսգրքի հողված 154-ով ամրագրված «քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը» և «քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը» արտահայտությունների միջև եղած ստորակետը («») փոխարինել «կամ» շաղկապով:

Քննարկվող **հանցակազմը ձևական է**, հանցագործությունն ավարտված է համարվում քվեարկության գաղտնիությունը որևէ եղանակով խախտելու պահից:

Սուբյեկտիվ կողմից նշված հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցի քվեարկության գաղտնիությունը խախտելու հանգամանքը: Ընդ որում, քննարկվող հանցակազմն առկա է համարվում միայն այն դեպքերում, երբ համապատասխան գործողությունները կատարվում են հենց քվեարկության գաղտնիությունը խախտելու, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ քննարկվող հանցակազմով նախատեսված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս հաջորդաբար գնահատման (բացահայտման) են ենթակա էլակետային նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները.

- արդյոք ենթադրյալ հանցավորն ապօրինի մուտք է գործել քվեարկության խցիկ,

- արդյոք հիմնավորվում է, որ քվեարկության խցիկ ապօրինի մուտք գործած անձը նպատակ է ունեցել խախտելու մեկ ուրիշի քվեարկության գաղտնիությունը (անկախ նրա հետ ազգակցական կամ այլ կապեր ունենալու հանգամանքից),

-
- կոնկրետ ինչու՞մ է դրսևորվել ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը (ֆիզիկական բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի և այլն),
 - կոնկրետ ե՞րբ և ի՞նչ եղանակով է ստուգվել ընտրողի կողմից քվեարկված քվեաթերթիկը,
 - քվեարկության գաղտնիությունը խախտելու կոնկրետ ինչպիսի՞ ալ եղանակ է կիրառվել և այլն:

**2.7. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության
ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական
քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ
իրացնելը (քր. օր.-ի հոդված 154¹)**

Չոդված 154¹. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ իրացնելը

1. Անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ այլ եղանակով իրացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է խոշոր չափերով, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

ՀՀ քր. օր.-ի հոդված 154¹-ը պատասխանատվություն է սահմանում անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելու կամ ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելու կամ այլ եղանակով դրանք իրացնելու համար:

Քննարկվող հանցագործության **անմիջական օբյեկտը** ընտրությունների անցկացման, քվեարկության՝ օրենքով սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Օբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է՝

1) կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության

ծրարներ պատրաստելով,

2) ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելով,

3) որևէ այլ եղանակով ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ իրացնելով:

Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստել ասելով՝ պետք է հասկանալ դրանց լրիվ կամ մասնակի կեղծումը: Ընդ որում, քննարկվող հոդվածի իմաստով պատրաստել է համարվում ոչ միայն ընտրական քվեաթերթիկի կամ քվեարկության ծրարի որևէ ռեկվիզիտ փոխելը, այլև նախատեսվածից ավել ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ թողարկելը: Օրինակ, երբ տպարանի աշխատակիցը տպագրում է նախատեսված թվից ավելի քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, հետագայում դրանք իրացնելու նպատակով:

Բնականաբար, նշված արարքների կատարումով, ըստ էության, արհեստականորեն ուռճացվում է քվեաթերթիկների, ինչպես նաև քվեարկության ծրարների թիվը, ինչն ամխուսափելիորեն հանգեցնում է ընտրությունների ողջ ընթացքի, ընտրություններից ակնկալվող հանրային սպասումների կատարյալ բեկմանը: Ակներև է, որ քվեարկության բովանդակությունն են կազմում քվեաթերթիկների պատշաճ հաշվարկն ու արդյունքների ամփոփումը, որն առարկայացվում է ստացված քվեաթերթիկներն ընդունելով և մեկ առ մեկ գնահատելով դրանց բովանդակային որոշակիությունը: Վերջին հաշվով, վավեր քվեաթերթիկն իրենից ներկայացնում է ՀՀ ևս մի քաղաքացու ցանկությունն որոշակի պաշտոնատար անձի, կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի տեսնելու իր խնդիրներն ու օրախնդիր հարցերը լուծողի դերում, իսկ նման ցանկության աղավաղումը ենթադրում է հանրային կամքի բացասում, ընտրությունների բնականոն ընթացքը սեփական սուբյեկտիվ-տակտիկական պատկերացումների հարմարեցնելու հակահասարակական ցանկության դրսևորում, ինչը ողջամտորեն պետք է առաջացնի համարժեք քրեաիրավական հետևանքներ:

Միևնույն ժամանակ տարօրինակ է, որ օրենսդիրը, պատասխանատվություն նախատեսելով կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելու համար, նույն քվեաթերթիկները կամ քվեարկության ծրարները հանձնելու կամ այլ եղանակով իրացնելու համար սահմանում է վերջիններիս անկհայտ կեղծ լինելու հատկանիշը, ինչը, կարծում ենք, անհարկի անորոշություն ու տարընթերցում է առաջ բերում:

Կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը նշանակում է մեկ ուրիշին դրանք փոխանցել, տրամադրել: Այլ կերպ ասած՝ հանձնումը ենթադրում է քվեաթերթիկների կամ քվեարկության ծրարների հասցեավորված օտարում սեփական տիրապետությունից: Այն կարող է դրսևորվել ինչպես անձամբ, այնպես էլ միջնորդի միջոցով: Միակ պայմանն այն է, որ հանձնված քվեաթերթիկները լինեն կեղծ, չհամապատասխանեն պաշտոնական քվեաթերթիկներին ներկայացվող պահանջներին:

Կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ **իրացնելու այլ եղանակ** ասելով՝ տվյալ դեպքում հասկացվում է հանձնելուց բացի ցանկացած այլ ձևով դրանք շրջանառության մեջ դնելը: Օրինակ՝ որևէ թեկնածուի օգտին «կողմ» ձայների քանակն ավելացնելու համար դրանք վերջինիս կողմնակիցներին վաճառելը կամ նվիրելը և այլն:

Հարկ է նշել նաև, որ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելով կամ որևէ այլ ձևով դրանք իրացնելով կարող է զբաղվել ինչպես պատրաստողը, այնպես էլ այլ անձինք: Արարքի քրեաիրավական որակման առումով դա որևէ նշանակություն չունի: Արարքի քրեաիրավական որակման համար նշանակություն ունի սոսկ հանձնման կամ այլ եղանակով իրացման փաստը: Օբյեկտիվ կողմի հետ կապված մնացյալ հանգամանքներն իրավական առումով չեն արժևորվում:

ՀՀ քր. օր.-ի հոդված 154¹-ով նախատեսված **հանցակազմը ձևական է**. հանցագործությունն ավարտված է համարվում կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելու կամ ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելու կամ այլ եղանակով դրանք

իրացնելու պահից՝ անկախ հետևանքներից: Բնականաբար, հանցակազմի նման շարադրումը պայմանավորված է նրանով, որ նշված արարքների կատարումն արդեն իսկ լուրջ հանրային վտանգավորություն է պարունակում:

Սուբյեկտիվ կողմից տվյալ հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցի, որ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ է պատրաստում կամ ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ է հանձնում կամ որևէ այլ եղանակով իրացնում է դրանք:

Հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև **շարժառիթը**՝ անձնական դրդումները կամ խմբային շահերով դրդված լինելը:

Անձնական դրդումներով նշված հանցանքի կատարման օրինակ կարող են լինել այն դեպքերը, երբ անձը, ասեմք, հանդիսանում է թեկնածուի մերձավոր ազգականը, ընկերը կամ այլ անձնական դրդապատճառներ ունի վերջինիս ընտրվելու համար: Սույն պարագայում, բնականաբար, դրսևորվում է նրա շահագրգռվածությունն այնքանով, որքանով նման շարժառիթով գործող անձը ողջամտորեն ակնկալում է, որ իր համար նախընտրելի թեկնածուի ընտրման դեպքում իր համար առաջանալու են բարենպաստ հետևանքներ:

Խմբային շահերից ելնելով քննարկվող հանցանքի կատարման օրինակ կարող է ծառայել այն դեպքը, երբ անձը հանդիսանում է այն քաղաքական համայնքի ներկայացուցիչը, համակիրը, որն առաջադրվել է համապատասխան ընտրություններում: Բնական է, որ այս պարագայում նրա հանցավոր հավակնությունները պայմանավորված են որոշակի քաղաքական հանրույթի հարելու հանգամանքով:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

ՀՀ քր. օր.-ի հոդված 154¹-ի **երկրորդ մասն** առավել խիստ պատասխանատվություն է նախատեսում նույն արարքի համար, որը կատարվել է խոշոր չափերով, մի խումբ անձանց կողմից

նախնական համաձայնությամբ:

Ընդ որում, տվյալ հանցակազմի իմաստով խոշոր չափերի հասկացությունն օրենքում սահմանված չէ, ինչը, կարծում ենք, լուրջ բացթողում է: Նման իրավիճակը գործնականում առաջացնում է նշված ծանրացնող հանցակազմի կիրառելիության արգելք այնքանով, որքանով հնարավոր չէ ստույգ որոշել, թե քվեաթերթիկների կամ քվեարկության ծրարների որ քանակություներն է համարվում խոշոր կոնկրետ իրավիճակում: Ակներև է, որ օրենսդիրը, հիշյալ արարքի համար նախատեսելով ավելի խիստ պատասխանատվություն, պետք է առարկայացներ, մանրամասներ, թե որ պայմաններում է գործում նշված դրույթը, ինչը, փաստորեն, չի իրականացվել:

Վստահաբար, կարող ենք նշել, որ քննարկվող հոդվածի նշված մասով արարքը որակելիս իրավակիրառողը կարող է լուրջ խնդիրների առջև կանգնել: Բայցևայնպես, այս պարագայում որպես ելակետային ցուցիչներ՝ վերջինիս համար կարող են օգտագործվել ընտրացուցակում ներառված ընտրողների թիվը և կեղծված ծրարների համամասնությունը, որն, իհարկե, ամբողջական և կատարյալ ցուցիչ չէ, բայց որոշակի կողմնորոշիչ դեր կատարում է:

Բացի այդ, օրենքի բովանդակությունից հետևում է, որ արարքը կարող է որակվել քր. օր.-ի հոդված 154¹-ի 2-րդ մասով միայն այն դեպքում, երբ կատարվել է միաժամանակ և՛ խոշոր չափերով, և՛ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ: Ասվածը բխում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 45-ի 10-րդ մասի 4-րդ պարբերությունից, որի համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Կարծում ենք, սա նույնպես էական բացթողում է, քանզի առավել նպատակահարմար և արդարացված կլիներ առանձնացնել նշված ծանրացնող հանգամանքները և նախատեսել դրանք տարբեր կետերով: Նման պայմաններում քննարկվող հանցա-

կազմի տարբեր մասերը պատշաճ որակելու իմաստով հնարավոր կլիներ նաև ապահովել բովանդակային որոշակիություն:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ քննարկվող հանցակազմով նախատեսված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս հաջորդաբար գնահատման (բացահայտման) են ենթակա ելակետային նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները.

- առկա են արդյոք կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելու կամ հանձնելու կամ այլ եղանակով իրացնելու հատկանիշներ,

- ո՞վ (ովքե՞ր) է (են) հանդիսացել կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ ստանալու հասցեատեր,

- ի՞նչ շարժառիթով է գործել կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ ենթադրաբար պատրաստած անձը (նշված հարցադրումը կարևոր է հանցակազմի սուբյեկտիվ կողմը գնահատելու հարցում՝ հաշվի առնելով, որ նպատակը այս հանցակազմի պարտադիր հատկանիշ է),

- ի՞նչ հանգամանքներով է հաստատվում ընտրական քվեաթերթիկների կամ քվեարկության ծրարների կեղծված լինելը (նշված փաստը կարող է հաստատվել համապատասխան փորձաքննությունների նշանակմամբ),

- ինչքա՞ն է ընտրացուցակում ներառված ընտրողների թիվը և ինչպիսի՞ն է կեղծված ծրարների համամասնությունը (ինչը հնարավորություն կտա որոշելու՝ արդյոք քվեաթերթիկները կամ ծրարները կեղծվել են խոշոր չափերով),

- ովքե՞ր և ի՞նչ դերակատարմամբ են մասնակցել տվյալ հանցանքի կատարմանը, առկա է եղել արդյոք համակատարում և այլն:

**2.8. Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը
(քր. օր.-ի հոդված 154²)**

**Հոդված 154². Ընտրողի կամքի ազատ իրականացմանը
խոչընդոտելը**

1. Թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով թեկնածուներից անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք ստանալը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Ընտրողին թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելը, որը կատարվել է գույքին վնաս պատճառելու սպառնալիքով, անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք տալով, բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

ՀՀ Սահմանադրության հոդված 2-ի համաձայն՝ «... Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով ...»:

Ընտրողի կամքի ազատ իրականացման ապահովումն անկյունաքարային նշանակություն ունի ընտրությունների կազմակերպման և անցկացման տեսանկյունից: Դրա հետ կապված իրավահարաբերությունների հիմքում ընկած է յուրաքանչյուր ընտրողի ազատ կամահայտնությունը, որով որոշվում են ընտրությունների արդյունքները:

ՀՀ քր. օր.-ի հոդված 154²-ը պատասխանատվություն է սահմանում ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելու համար:

Քննարկվող հանցագործության **հիմնական անմիջական օբյեկտը** ընտրությունների անցկացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: **Լրացուցիչ անմիջական օբյեկտի** դերում հանդես են գալիս մարդու կյանքը, առողջությունը, ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը:

Կախված ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելու եղանակից՝ օրենսդիրը տարբեր կերպ է նկարագրում տվյալ հանցագործության **օբյեկտիվ կողմը**:

Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի հոդված 154²-ի **առաջին մասը** պատասխանատվություն է սահմանում թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով թեկնածուներից անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք ստանալու համար: Սակայն կաշառք ստանալը, ըստ էության, չի կարող ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտել համարվել: Այլ հարց է ընտրակաշառք տալը: Ուստի, կարծում ենք, որ առավել նպատակահարմար կլիներ ընտրակաշառք ստանալու համար առանձին հանցակազմ նախատեսել:

Սույն հոդվածի իմաստով թեկնածու ասելով՝ պետք է հասկանալ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու ընտրությունների ժամանակ ինքնառաջադրման կամ կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների կողմից առաջադրման կարգով գրանցված մեղսունակ ֆիզիկական անձին: Այս առումով գտնում ենք, որ քննարկվող հանցակազմն անհրաժեշտ է լրացնել համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների օգտին կողմ կամ դեմ քվեարկելու պայմանը որպես տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմի դրսևորում:

Քաջի այդ, անհրաժեշտ ենք համարում նաև հանցակազմը լրացնել հանրաքվեների ընթացքում «այո» կամ «ոչ» քվեարկելու պայմանը: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 154²-ը վերոնշյալ արարքների համար քրեական պատասխանատվություն չի նախատեսում, ինչը, կարծում ենք, արդարացված չէ: Այս արարքները իրենց հանրային վտանգավորությամբ չեն զիջում թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու պայմանով կաշառք ստանալուն կամ այն կատարելուն հարկադրելուն:

Հաճախ իրավիճակներ են լինում, երբ ընտրողը կաշառք է ստանում ընտրություններին մասնակցելու և քվեաթերթիկը անվավեր դարձնելու պայմանով, որը ևս քննարկվող հանցակազմի շրջանակներում հանցագործություն չի համարվում: Ուստի, անհրաժեշտ ենք համարում ՀՀ քր. օր.-ի հոդված 154²-ով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը համալրել նաև արարքի այս դրսևորմամբ:

Քննարկվող հոդվածի **երկրորդ մասը** պատասխանատվություն է սահմանում ընտրողին՝ թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելուն, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելու համար: Այս առումով վերը ներկայացված նկատառումները վերաբերում են նաև սույն հոդվածի 2-րդ մասին, որտեղ ևս, կարծում ենք, նպատակահարմար է կատարել համապատասխան լրացումներ:

Քաջի այդ, ինչպես ուղղակիորեն բխում է օրենքի բնորոշումից, արարքը կարող է որակվել ՀՀ քր. օր.-ի հոդված 154²-ի **երկրորդ մասով** միայն այն դեպքում, եթե թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելուն, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն ընտրողին հարկադրել են միայն հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

- 1) գույքին վնաս պատճառելու սպառնալիքով,
- 2) անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք տալով,
- 3) բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով:

Այսինքն, որևէ այլ եղանակով (օրինակ՝ խաբեությամբ, անվանարկող տեղեկություններ տարածելու սպառնալիքով և այլն) նույն արարքը կատարելը չի հանգեցնի պատասխանատվության քր. օր.-ի տվյալ հոդվածով: Այս առումով որոշակի տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ քր. օր.-ի հոդված 154²-ի **երկրորդ մասը** գույքին վնաս պատճառելու սպառնալիքը նախատեսում է որպես քննարկվող հանցագործության եղանակ, իսկ գույքին վնաս պատճառելը՝ ոչ: Կարծում ենք, սա ևս օրենսդրի բացթողումներից է:

Այսպիսով, քննարկվող հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքի կատարման եղանակների շրջանակը, մեր կարծիքով, անհարկի սահմանափակվել է: Ուստի, առաջարկում ենք նախատեսել նաև այլ եղանակներով այդ արարքի կատարման հնարավորությունը:

Հարկ է նշել նաև, որ գույքին վնաս պատճառելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքով թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելուն, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելու դեպքում արարքը լրացուցիչ չի որակվում քր. օր.-ի հոդված 137-ով: Այլ է վիճակը բռնություն գործադրելու պարագայում: Մասնավորապես, ծեծի, խոշտանգման, առողջությանը ոչ մեծ կամ միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերում արարքը որակվում է միայն քր. օր.-ի հոդված 154²-ով: Իսկ առողջությանը ծանր վնաս պատճառելու և սպանության դեպքերում արարքը որակվում է համապատասխան հոդվածների համակցությամբ:

Քննարկվող **հանցակազմերը ձևական են**. արարքը ավարտված է համարվում՝

1) թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով թեկնածուներից անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք ստանալու պահից,

2) ընտրողին՝ թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելուն, ընտրություններին մասնակցելուն կամ ընտ-

րություններին մասնակցելուց հրաժարվելուն գույքին վնաս պատճառելու սպառնալիքով կամ անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք տալով, կամ բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով հարկադրելու պահից:

Սուբյեկտիվ կողմից ՀՀ քր. օր.-ի հոդված 154²-ով նախատեսված հանցագործությունները բնութագրվում են միայն **ուղղակի դիտավորությամբ**: Այսինքն՝ մի դեպքում հանցավորը գիտակցում է, որ կաշառք է ստանում թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով, իսկ մյուս դեպքում՝ որ համապատասխան եղանակով հարկադրում է ընտրողին թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելուն, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն:

Քննարկվող հոդվածի **առաջին մասով** նախատեսված հանցագործության **սուբյեկտը հատուկ է՝ ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ**, իսկ **երկրորդ մասով** նախատեսված հանցագործության **սուբյեկտը՝ ընդհանուր** (16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ):

ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 2-ի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն քվեարկության անցկացման օրը Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացիները»:

Միևնույն ժամանակ ՀՀ քր. օր.-ի քննարկվող հանցակազմի իմաստով սուբյեկտ են հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք, սակայն միայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ, եթե ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեզիստորում մինչև քվեարկության օրն ունեն առնվազն վեց ամսվա հաշվառում:

Պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողները, ձերբակալված կամ կալանավորված անձինք, ինչպես նաև Հայաստա-

նի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիները տեղական ինքնակառավարման մարմինների և Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ չեն կարող հանդիսանալ քննարկվող հողվածի առաջին մասով նախատեսված հանցագործության սուբյեկտ, քանի որ չունեն ընտրելու իրավունք: Նրանց կողմից տվյալ հանցակազմում նկարագրված արարքը կատարելու դեպքերը, համապատասխան հատկանիշների առկայության պարագայում, պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի ոչ թե 154², այլ 178 հոդվածով՝ որպես խարդախություն:

Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիները, սակայն, հանդիսանում են ՀՀ քր. օր.-ի հոդված 154²-ի 1-ին մասով նախատեսված հանցագործության սուբյեկտ համապետական ընտրությունների ժամանակ՝ անկախ այն հանգամանքից՝ արդյոք ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվել են, թե՞ ոչ: Այս իրավիճակում էականն այն է, որ անձի ընտրելու իրավունքը ծագում է ոչ թե ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու պահից, այլ օրենքի հիման վրա: Իսկ ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու պահից ծագում է անձի ընտրություններին մասնակցելու իրավունքը: Ուստի, անհրաժեշտ է սույն հանցակազմով նախատեսված հանցագործության սուբյեկտ համարել նաև այս խումբ անձանց:

Առանձին ուշադրության է արժանի նաև քննարկվող հողվածի վերնագիրը՝ «Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը»: Բանն այն է, որ վերնագիրը պետք է նկարագրի տվյալ հանցակազմի դիսպոզիցիայով նախատեսված արարքը, արտահայտի դրա բուն էությունը: Հետևաբար, առավել նպատակահարմար է այն ամրագրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ընտրակաշառք ստանալը կամ տալը»:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ քննարկվող հողվածի առաջին մասով նախատեսված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս հաջորդաբար գնահատման (բացահայտման) են ենթակա ելակետային

Ուշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները.

- պարզել անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք ստացած անձանց շրջանակը (այս հանգամանքը կարելի է պարզել միջնորդների և այլ վկաների բացատրություններով, մամուլում տեղ գտած հայտարարություններով, համապատասխան ցուցակների բացահայտմամբ, նախկինում կատարված հեռախոսազանգերի վերծանմամբ և այլն),

- բացահայտել այդ անձանց՝ ընտրելու իրավունք ունենալու փաստը,

- պարզել՝ անձա՞մբ, թե՞ միջնորդի միջոցով է ընտրակաշառք տրվել,

- եթե ընտրակաշառքն ստացվել է միջնորդի միջոցով, պարզել միջնորդների շրջանակը,

- պարզել թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանի առկայությունը (այս հանգամանքը հնարավոր է պարզել ֆիզիկական և իրավաբանական անձանցից բացատրություններ վերցնելով, հեռախոսային խոսակցությունները գաղտնալսելով և այլն),

- պարզել կաշառք ստանալու փաստը (այս հանգամանքը հնարավոր է պարզել բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության ստացմամբ, եթե կաշառքը տրվել է բանկային փոխանցումների եղանակով, միջնորդներից և այլ անձանցից բացատրություններ վերցնելով և այլն),

- պարզել այն թեկնածուին, որի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու պայմանով էր ստացվել կաշառքը,

- որոշել՝ արդյոք տվյալ անձը հանդիսանում է օրենքով սահմանված կարգով գրանցված թեկնածու, թե՞ ոչ:

Քննարկվող հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս հաջորդաբար գնահատման (բացահայտման) են ենթակա ելակետային ուշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները.

- պարզել այն ընտրողների շրջանակը, որոնց հարկադրել են թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկել, ընտրություններին մասնակցել կամ մասնակցությունից հրաժարվել (տուժողների շրջանակը հնարավոր է պարզել վերջիններիս դիմում-բողոքներով, արդեն իսկ ի հայտ եկած տուժողներին հարցաքննելով, մամուլում տեղ գտած հայտարարություններով, մամուլում համապատասխան հայտարարություն տեղադրելով և այլն),

- պարզել այն թեկնածուին, ում օգտին կողմ կամ դեմ քվեարկելու պայմանով էր կիրառվել հարկադրանքը,

- որոշել՝ արդյոք տվյալ անձը հանդիսանում է օրենքով սահմանված կարգով գրանցված թեկնածու, թե՞ ոչ,

- բացահայտել՝ կոնկրետ ի՞նչ եղանակով է դրսևորվել անձի նկատմամբ հարկադրանքը (տվյալ հանգամանքը հնարավոր է բացահայտել տուժողների բացատրություններով, հեռախոսային խոսակցությունները գաղտնալսելով, դատաբժշկական և/կամ դատահոգեբանական փորձաքննություններով և այլն),

- անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք տալով հարկադրելու փաստը հնարավոր է պարզել բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության ստացմամբ, եթե կաշառքը տրվել է բանկային փոխանցումների եղանակով, միջնորդներից և այլ անձանցից բացատրություններ վերցնելով և այլն:

2.9. Ընտրական հանձնաժողովի կնիքը չվերադարձնելը, կնիքի պահպանման սահմանված կարգը խախտելը (քր. օր.-ի հոդված 154³)

Հոդված 154³. Ընտրական հանձնաժողովի կնիքը չվերադարձնելը, կնիքի պահպանման սահմանված կարգը խախտելը

Ընտրական հանձնաժողովի կնիքը սահմանված ժամկետում դրա համար պատասխանատու անձի կողմից չվերադարձնելը, ինչպես նաև կնիքի պահպանման համար սահմանված կարգը խախտելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

ՀՀ քր. օր.-ի հոդված 154³-ը պատասխանատվություն է սահմանում ընտրական հանձնաժողովի կնիքը սահմանված ժամկետում դրա համար պատասխանատու անձի կողմից չվերադարձնելու, ինչպես նաև կնիքի պահպանման սահմանված կարգը խախտելու համար:

Քննարկվող հանցագործության **անմիջական օբյեկտը** ընտրությունների անցկացման սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Օբյեկտիվ կողմից այն բնութագրվում է՝

1) ընտրական հանձնաժողովի կնիքը սահմանված ժամկետում չվերադարձնելով,

2) կնիքի պահպանման համար սահմանված կարգը խախտելով:

Ընտրական հանձնաժողովի կնիքի պահպանման կարգը և այն վերադարձնելու ժամկետները սահմանվում են ՀՀ ընտրական օրենսգրքով:

ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 58-ի 3-րդ մասի համաձայն՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները տեղադրում է ան-

թափանց փաթեթներում, առանց դրանց վրա նշումներ կատարելու փակում, կենտրոնական ընտրական հանձնաժողովի կնիքով կնքում է դրանք և քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 5, և ոչ ուշ, քան 3 օր առաջ հանձնում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին՝ յուրաքանչյուր ընտրական տեղամասին մեկ կնիք հաշվարկով՝ կատարելով հանձնվող կնիքների բացառապես քանակական հաշվառում»։ Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում փաթեթները կնքվում և քվեարկության նախորդ օրը հանձնվում են տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին՝ յուրաքանչյուրին մեկ փաթեթավորված կնիք»։

Վերը նշված հոդվածի համակարգային վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 154³-ի իմաստով կնիք ասելով՝ պետք է հասկանալ միայն այն կնիքները, որոնք ընտրությունների անցկացման գործընթացի հետ կապված վերադաս ընտրական հանձնաժողովից փոխանցվում են ստորադաս ընտրական հանձնաժողովին, և հենց այդ փոխանցման փաստի ուժով էլ ենթակա են վերադարձման։ Բանն այն է, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները, ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 37-ի 4-րդ և 5-րդ, ինչպես նաև հոդված 40-ի 1-ին և հոդված 41-ի 1-ին մասերի համաձայն, ի տարբերություն տեղամասային ընտրական հանձնաժողովի, որը կազմավորվում է կոնկրետ ընտրությունների ժամանակ, մշտապես գործող մարմիններ են, ունեն իրենց կնիքները, որոնք վերադարձման ենթակա չեն, քանի որ չեն փոխանցվել կոնկրետ ընթացիկ ընտրությունների համար։ Ուստի, չպետք է շփոթել այդ մարմինների աշխատանքային կնիքները տեղամասային ընտրական հանձնաժողովին ընտրությունների համար փոխանցվող և վերադարձման ենթակա կնիքների հետ։

Կնիքների վերադարձման ժամկետները տարբերվում են, կախված ընտրական հանձնաժողովից։ Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 71-ի 9-րդ մասի համաձայն՝ «Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը...

հանձնաժողովի կնիքը քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, ներկայացնում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Ինչ վերաբերում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից Կենտրոնական ընտրական հանձնաժողովին դրանք փոխանցելու ժամկետներին, ապա դա սահմանված է «Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը եվ դրոշմակնիքը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնելու կարգը» սահմանելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011թ.-ի հուլիսի 29-ի որոշմամբ, որի համաձայն՝ «Համապետական, Երևանի ավագանու ընտրությունների դեպքում կնիքները Կենտրոնական ընտրական հանձնաժողով են տեղափոխվում քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո համապատասխան մասնագիտացված կազմակերպության, իսկ Երևան քաղաքում՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների միջոցով, իսկ Ազգային ժողովի լրացուցիչ և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում, բացառությամբ Երևանի ավագանու ընտրությունների, կնիքները կենտրոնական ընտրական հանձնաժողով են տեղափոխվում քվեարկության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների միջոցով»:

Վերոգրյալից կարելի է հետևություն անել, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից կնիքները ԿԸՀ-ին փոխանցելու ժամկետները տարբերվում են կախված ընտրությունների կոնկրետ տեսակից: Այսպես, ՀՀ նախագահի, ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների դեպքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարտավոր է կնիքները վերադարձնել ԿԸՀ քվեարկության ավարտից հետո 24 ժամվա ընթացքում՝ մասնագիտացված կազմակերպության միջոցով, իսկ ՀՀ ազգային ժողովի լրացուցիչ, համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու ընտրությունների դեպքում՝ քվեարկության ավարտից հետո եռօրյա ժամկետում՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների միջոցով:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 154³-ի իմաստով կնիքի պահպանման կարգը սահմանված է ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 59-ի 2-րդ մասով, որի համաձայն «... փաթեթավորված կնիքը, դրոշմակնիքը, հանձնաժողովի անդամների անհատական կնիքները պահվում են քվեարկության սենյակում գտնվող հատուկ չիրկիզվող պահարանում: Նշված հարցերը կարգավորվում են նաև «Տեղամասային ընտրական հանձնաժողովում քվեաթերթիկների, քվեարկության ծրարների, ընտրողների ցուցակների, փաթեթավորված կնիքի, դրոշմակնիքի, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքի պահպանման կարգը սահմանելու մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011թ.-ի հուլիսի 29-ի թիվ 40-Ն որոշմամբ, որի համաձայն՝ «Քվեարկության նախորդ օրը տեղամասային ընտրական հանձնաժողովը կնիքը, դրոշմակնիքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները տեղադրում է ընտրական փաստաթղթերի պահպանման համար նախատեսված հատուկ չիրկիզվող պահարանում»: Մինևույն ժամանակ, ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 66-ի 4-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «հանձնաժողովի կնիքը քվեարկության ողջ ընթացքում պետք է գտնվի քվեատուփի մոտ՝ բոլորի համար տեսանելի տեղում»:

Բացի այդ, գտնում ենք, որ կնիքի պահպանման կարգ ասելով՝ պետք է հասկանալ ոչ միայն հենց կոնկրետ փակ, անշարժ վիճակում պահպանելուն ուղղված վայրերը մատնանշող դրույթները, այլև դա տեղափոխելու, հանձնելու ընթացակարգը ևս, քանի որ, օրինակ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովից ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կնիքը տեղափոխելիս ևս պետք է պահպանվեն դրա անձեռնմխելիության, այլ անձանց համար անհասանելիության կանոնները, որոնց չպահպանումը նույնպես միանգամայն պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության:

Ըննարկվող արարքը նկարագրված է **ձևական հանցակազմով**. հանցագործությունն ավարտված է համարվում ընտրական հանձնաժողովի կնիքը սահմանված ժամկետում չվերադարձնե-

լու կամ դրա պահպանման համար սահմանված կարգի որևէ խախտում թույլ տալու պահից: Սակայն դժվար թե կարելի է արդարացված համարել անձին քրեական պատասխանատվության ենթարկելը պարզապես ընտրական հանձնաժողովի կնիքը սահմանված ժամկետում չվերադարձնելու կամ դրա պահպանման համար սահմանված կարգի որևէ խախտում թույլ տալու համար, առանց որևէ հետևանքի առաջացման:

Սուբյեկտիվ կողմից ՀՀ քր. օր.-ի հոդված 154³-ով նախատեսված հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ մի դեպքում հանցավորը գիտակցում է, որ չի վերադարձնում ընտրական հանձնաժողովի կնիքը սահմանված ժամկետում, իսկ մյուս դեպքում՝ որ խախտում է դրա պահպանման համար սահմանված կարգը:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտը** հատուկ է՝ ընտրական հանձնաժողովի կնիքը սահմանված ժամկետում վերադարձնելու, ինչպես նաև կնիքի պահպանման համար պատասխանատու անձը:

Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 71-ի 9-րդ մասի համաձայն՝ «Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ... հանձնաժողովի կնիքը ... ներկայացնում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով»: Այս առումով հարկ է նշել, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 45-ի 10-րդ մասի համաձայն, ինչպես արդեն նշվել է՝ «Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է: Հետևապես, առաջնորդվելով նշված դրույթի պահանջներով՝ կարող ենք արձանագրել, որ տվյալ դեպքում կնիքները վերադարձնելու պարտականությունը դրվել է միաժամանակ երկու անձի վրա, քանի որ «ընտրական հանձնաժողովի նախագահ» ու «քարտուղար» եզրույթները կապվել են «և» շաղկապով: Կարծում ենք, սակայն, որ նույն պարտականության կատարման հա-

մար միաժամանակ երկու պատասխանատու անձ նախատեսելը նպատակահարմար չէ, քանի որ գործնականում այդ երկու անձանց կողմից միևնույն գործողության միաժամանակյա, զուգահեռ կատարումը որոշակի անհարմարություններ և անորոշություն կարող է առաջացնել: Ուստի, առավել արդյունավետ կարող է լինել այն տարբերակը, երբ կնիքների վերադարձման պատասխանատու անձ համարվի ՏԸՀ նախագահը, իսկ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված այդ պարտականության կատարման անհնարինության դեպքում՝ քարտուղարը: Նշված իրավակարգավորմամբ, կարծում ենք, հնարավոր կլինի ապահովել իրավական ակտի լեզվական պարզությունը, հստակությունն ու մատչելիությունը:

Ինչ վերաբերում է ԸԸՀ-ի կողմից կնիքների վերադարձման համար պատասխանատու անձին, ապա վերջինս վերը նշված իրավահարաբերությունները կարգավորող դրույթներում հստակորեն չի առանձնացվում: Սակայն, հաշվի առնելով այն տեսակետը, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ղեկավարում է ԸԸՀ նախագահը, ապա, կարծում ենք, հենց նա պետք է առաջնահերթ հանդես գա որպես քննարկվող պարտականությունների կատարման համար պատասխանատու անձ: Միևնույն ժամանակ, հնարավոր է, որ ԸԸՀ նախագահը դրա պահպանման կամ վերադարձման պարտականությունը հանձնարարի փոխնախագահին, կամ որոշակի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ նախագահի կողմից նշված պարտականության կատարման անհնարինության պատճառով այն ստանձնի հանձնաժողովի փոխնախագահը: Ամեն դեպքում տարակարծություններից և երկիմաստ մեկնաբանություններից խուսափելու նպատակով այս դրույթը ևս պետք է ստանա իր օրենսդրական ամրագրումը:

Նույն տրամաբանությամբ, տեղամասային ընտրական հանձնաժողովում կնիքի պահպանման համար պատասխանատու անձ է համարվում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: Սակայն, հաշվի առնելով ԿԸՀ-ի 2011թ.-ի հուլիսի 29-ի թիվ 40-Ն որոշմամբ սահմանված այն դրույթը, որ կնի-

քը պահարանում դնելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պահարանը հանձնում է պահպանման ոստիկանության ծառայողներին, իսկ քվեարկության օրը, ստուգելով պահարանին սունձված թղթի ամբողջականությունը, ոստիկանության ծառայողներից ընդունում է պահարանը՝ հանձնելուց հետո կնիքի, որը գտնվում է պահարանի մեջ, պահպանման պատասխանատուն համարվում է ոստիկանը՝ մինչև սահմանված կարգով կրկին հանձնաժողովի նախագահի կողմից հետ ընդունելը:

Ինչ վերաբերում է Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին կամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ապա այդտեղ պատասխանատու են համարվում կնիքը ստանալու լիազորություն ունեցող համապատասխան անձինք: Նույնը վերաբերում է նաև կնիքը մասնագիտական կազմակերպության միջոցով տեղափոխելու դեպքին, երբ պատասխանատու անձ կարող է համարվել կոնկրետ այդ պահին տեղափոխում իրականացնող անձը:

Ամփոփելով ասվածը՝ մշենք, որ քննարկվող հողվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս անհրաժեշտ է.

- պարզել, կոնկրետ ի՞նչ իրավական ակտերով են սահմանվում համապատասխան ժամկետները և կարգը,
- կատարել դեպքի վայրի՝ տեղամասային կենտրոնի, ինչպես նաև չիրկիզվող պահարանի զննություն,
- առգրավել գործի համար նշանակություն ունեցող արձանագրությունները, փաստաթղթերը, տեղամասային կենտրոնի տեսախցիկները՝ կնիքի շարժը, ինչպես նաև պատասխանատու անձին պարզելու համար,
- հարցաքննել հանձնաժողովի անդամներին՝ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար և այլն:

**2.10. Ձեռքով տեղամասային կենտրոն մուտք գործելը
(քր. օր.-ի հոդված 154⁴)**

Հոդված 154⁴. Ձեռքով տեղամասային կենտրոն մուտք գործելը

Քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն (քվեարկության խցիկ) մուտք գործելն առանց ծառայողական անհրաժեշտության՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

ՀՀ քր. օր.-ի հոդված 154⁴-ը պատասխանատվություն է սահմանում քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն (քվեարկության խցիկ) առանց ծառայողական անհրաժեշտության մուտք գործելու համար:

Քննարկվող հանցագործության **անմիջական օբյեկտը** ընտրությունների անցկացման սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Օբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է քվեարկության օրը զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն (քվեարկության խցիկ) առանց ծառայողական անհրաժեշտության մուտք գործելով: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ, ըստ էության, զենքով տեղամասային կենտրոն մուտք գործող անձը ապակայունացնում և անհարկի, ոչնչով չպայմանավորված լարվածություն է հարուցում տեղամասային կենտրոնում, ինչը կարող է հանգեցնել ընտրողների գիտակցության, ընտրովի ներկայացուցչական մարմիններ ձևավորելու պատշաճ նախատրամադրվածության խաթարմանը, ինչն անենկին չի բխում հանրային շահերից:

Թեպետ տեղամասային կենտրոն մուտք գործող անձն ի պաշտոնե ունի զենք կրելու իրավունք, այսուհանդերձ, անձին

վերապահված յուրաքանչյուր իրավունք ունի իրականացման որոշակի վավերապայմաններ ու կարգ: Քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածի նպատակն է կանխարգելելու իրավունքի ի չարս գործադրումը, հասարակական հարաբերությունների անհրաժեշտ իրավական դրության խախտմանն ուղղված գործողությունները: Վերջին հաշվով, եթե առկա չէ ծառայողական անհրաժեշտություն, ապա բոլորովին կարիք չկա հանրության մեջ ընդգծել սեփական ծառայողական դիրքով պայմանավորված անհրաժեշտ հատկանիշները:

Քննարկվող հանցակազմի իմաստով առանձին հետաքրքրություն է ներկայացնում «տեղամասային կենտրոն» արտահայտության ճշգրտումը: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգիրքը թեպետ չի նախատեսում վերջինիս բնորոշումը, այսուհանդերձ, դրանում առկա մի շարք իրավադրույթների համադրված վերլուծությունից պարզ է դառնում, որ տեղամասային կենտրոն է համարվում քվեարկության անցկացման համար նախատեսված, քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ միջոցներով ապահովված և համայնքի ղեկավարի կողմից օրենքով նախատեսված կարգով սահմանված վայրը: Հետևում է, որ հանցակազմն ավարտված է համարվում տեղամասային կենտրոն անձի մուտք գործելու պահից:

Ընդ որում, նշված հանցակազմով նախատեսված արարքի ավարտման պահն առերևույթ օրենսդիրը սահմանափակել է սոսկ քվեարկության խցիկ անձի մուտք գործելով, թեպետ հոդվածի վերտառությամբ ամրագրվել է տեղամասային կենտրոն արտահայտությունը: Ստացվել է այնպես, որ տվյալ դեպքում օրենսդիրը տեղամասային կենտրոնը, փաստորեն, նույնացնում է միայն քվեարկության խցիկի հետ: Բայցևայնպես, գտնում ենք, որ փակագծերի շրջանակներում ամրագրված «քվեարկության խցիկ» արտահայտությունն այս պարագայում չի կարող հիմք համարվել անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար այն դեպքերում, երբ վերջինս, օրինակ՝ մուտք գործի ոչ թե քվեախցիկ, այլ մոտենա քվեատուփին: Բնական է, որ նշված արարքի հանրային վտանգավորությունը պայմանա-

վորված է հենց տեղամասային կենտրոն անձի մուտք գործելով՝ հաշվի առնելով այն, որ անձը նպատակ ունի հենց տեղամասային կենտրոնում հավաքված հանրույթի մեջ ցուցադրաբար ներկայանալ զենքով: Հակառակ մեկնաբանումը ուղղակիորեն կահակասի օրենսդրի իրական կամքին և օրենսդրական կարգավորման տրամաբանությանը:

Ինչպես ուղղակիորեն բխում է քրեական օրենքից, արարքը կարող է որակվել քր. օր.-ի հոդված 154⁴-ով, եթե հանցավորը ցուցադրաբար և առանց ծառայողական անհրաժեշտության է զենքով մուտք գործել քվեարկության խցիկ:

Ցուցադրաբար մուտք գործել ասելով՝ տվյալ դեպքում պետք է հասկանալ ոչ միայն զենքը ձեռքում պահելով կամ այն թափահարելով, այլև որևէ այլ կերպ դրա առկայության մասին հասկացնելով, օրինակ, ձեռքը պատյանին դնելով քվեախցիկ մտնելը:

Ծառայողական անհրաժեշտությունը քննարկվող իրադրությունում, կարծում ենք, կարող է առկա լինել միայն արարքի հանցավորությունը բացառող այս կամ այն իրավիճակում (օրինակ, անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության, հանցանք կատարած անձին բռնելու): Հետևաբար, ցանկացած այլ դեպքում զենքով քվեարկության խցիկ մտնելու ծառայողական անհրաժեշտությունը բացակայում է: Այս առումով նշենք նաև, որ ծառայողական անհրաժեշտության մասին կարող են վկայել տեղամասային կենտրոնում հասարակական կարգին սպառնացող խախտումների կանխումը կամ վերացումը:

Ձեռք ասելով՝ քննարկվող հոդվածի իմաստով պետք է հասկանալ միայն ծառայողական հրազենը կամ սառը զենքը, որը կրելու թույլտվությունն օրենքով սահմանված կարգով անձին վերապահված է:

Քր. օր.-ի հոդված 154⁴-ով նախատեսված արարքը նկարագրված է **ձևական հանցակազմով**, հանցագործությունն ավարտված է համարվում քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար տեղամա-

սային կենտրոն (քվեարկության խցիկ) առանց ծառայողական անհրաժեշտության մուտք գործելու պահից:

Միևնույն ժամանակ, քննարկվող հոդվածի դիսպոզիցիայից ակնհայտորեն բխում է, որ տեղամասային կենտրոն ցանկացած ցուցադրական զինված մուտք չէ, որ առաջացնում է քրեաիրավական հետևանքներ: Անհրաժեշտ է, որ այդպիսի մուտքը իրականացվի՝

- քվեարկության օրը.
- ցուցադրաբար.
- առանց ծառայողական անհրաժեշտության:

Բացառապես նշված վավերապայմանների միաժամանակյա առկայության պարագայում է, որ արարքը կարող է որակվել քննարկվող հոդվածով:

Սուբյեկտիվ կողմից քննարկվող հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ քվեարկության օրը առանց ծառայողական անհրաժեշտության զենքով ցուցադրաբար մուտք է գործում քվեարկության խցիկ: Ընդ որում, ո՛չ նպատակը և ո՛չ էլ շարժառիթները արարքը ՀՀ քր. օր.-ի հոդված 154⁴-ով որակելու համար որևէ նշանակություն չունեն: Բայցևանպես, քննարկվող արարքի կատարմամբ դրսևորվում են անձի հակասոցիալական հատկությունները, սեփական պաշտոնեական դիրքը ծառայության իրական գործառույթներին համահունչ չօգտագործելը:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտը** հատուկ է՝ զենք կրելու իրավունք ունեցող ծառայողը, ով, կարծում ենք, պետք է նաև ի պաշտոնե քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու որոշակի պարտականություններ ունենա: Հակառակ դեպքում օրենսդիրն ուղղակիորեն չէր մատնանշի «ծառայողական անհրաժեշտություն» արտահայտությունը: Բանն այն է, որ ծառայողական անհրաժեշտությունն արդեն իսկ ենթադրում է, որ անձն ունի որոշակի ծառայողական պարտականություններ և դրանց պատշաճ իրականացումն է ներառվում վերջինիս գործառութային առաքե-

լության մեջ՝ պայմանավորելով նրա ներկայությունը տեղամասային կենտրոնին հարակից տարածքում:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ քննարկվող հողվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս հաջորդաբար գնահատման (բացահայտման) են ենթակա ելակետային նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները.

- ո՞ր օրն է պաշտոնապես սահմանված եղել որպես քվեարկության օր,

- ենթադրյալ հանցանք կատարած ծառայողն ունի արդյոք զենք կրելու իրավունք,

- ինչպիսի՞ հանգամանքներ են վկայում այն մասին, որ վերջինս ցուցադրաբար է մուտք գործել տեղամասային կենտրոն (օրինակ՝ տեղամասային կենտրոնում գտնվող անձանց, հանձնաժողովի նախագահի, անդամների բացատրությունները, տեսախցիկների համապատասխան արձանագրությունները և այլն),

- ի՞նչն էր պայմանավորում տեղամասային կենտրոն մուտք գործելը՝ առկա էր արդյոք որևէ ծառայողական անհրաժեշտություն, թե՞ դա միտված չէր որևէ հանրօգուտ նպատակի հրատապ կենսագործմանը (նշված փաստը կարող է հաստատվել համապատասխան ծառայողի հարցաքննության արձանագրություններով) և այլն:

2.11. Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալը (քր. օր.-ի հոդված 154⁵)

Հոդված 154⁵. Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալը

Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

ՀՀ քր. օր.-ի հոդված 154⁵-ը պատասխանատվություն է սահմանում վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելու, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալու համար:

Քննարկվող հանցագործության **անմիջական օբյեկտը** ընտրությունների անցկացման սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Օբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է՝

1) վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդա-

մին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելով,

2) վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալով:

Ընտրական փաստաթղթերին ծանոթանալու, ընտրական հանձնաժողովի արձանագրությունները տրամադրելու կարգն ու պայմանները սահմանված են ՀՀ ընտրական օրենսգրքով:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 154⁴-ի իմաստով **ընտրական փաստաթղթեր** են համարվում ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկում տեղադրվող փաստաթղթերը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքների փաթեթը, մարված քվեաթերթիկների փաթեթը, օգտագործված քվեաթերթիկների ելունդների փաթեթը, ընտրողների ցուցակների փաթեթը, յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների փաթեթը, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում թեկնածուին կողմ և դեմ քվեարկված քվեաթերթիկների փաթեթները, անվավեր քվեաթերթիկների փաթեթը, սահմանված նմուշի ծրարների փաթեթը, տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը:

Ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն **խոչընդոտելը** կարող է դրսևորվել նշված փաստաթղթերը չտրամադրելով, դրանց տրամադրումն անհարկի ձգձգելով, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ տրամադրելով և այլն:

ՀՀ քր. օր.-ի հոդված 154⁵-ով նախատեսված **հանցակազմը ձևական է**. հանցագործությունն ավարտված է համարվում վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն որևէ ձևով խոչընդոտելու կամ ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենների տրամադրումը մերժելու պահից:

Սուբյեկտիվ կողմից տվյալ հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն հանցավորը

տվյալ դեպքում պետք է գիտակցի, որ սահմանված կարգի խախտմամբ խոչընդոտում է վստահված անձի, ընտրական հանձնաժողովի անդամի, դիտորդի կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի կողմից ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն կամ նրանց չի տալիս ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ:

Ընտրական փաստաթղթերին և ընտրական հանձնաժողովի արձանագրություններին ծանոթանալու իրավունք ունենալու համար անհրաժեշտ է, որպեսզի տվյալ անձն ընտրությունների ժամանակ ունենա համապատասխան կարգավիճակ՝ լինի վստահված անձ, ընտրական հանձնաժողովի անդամ, դիտորդ կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ: Նշված անձանց կողմից ընտրական փաստաթղթերին կամ հանձնաժողովի արձանագրություններին ծանոթանալու հնարավորությունն ամրագրված է ՀՀ ընտրական օրենսգրքի համապատասխան հոդվածներում:

Մասնավորապես, նշված օրենսգրքի հոդված 6-ի 12-րդ մասի համաձայն՝ «Ընտրական հանձնաժողովների նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում տեղամասային կենտրոնում սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունեն ներկա լինելու վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, ինչպես նաև վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները՝ վերադաս հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ»:

ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 31-ի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դիտորդը և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն իրավունք ունեն անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ուն կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, իրավունք ունեն անարգել ծանոթանալու տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձա-

նագրություններին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների):

Նույն օրենսգրքի հոդված 33-ի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վստահված անձն իրավունք ունի անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների):

ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 71-ի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով: Մինևույն ժամանակ, նշված օրենսգրքի հոդված 74-ի 7-րդ մասի և հոդված 75-ի 5-րդ մասի համաձայն՝ ընտրատարածքային կամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է քվեարկության արդյունքների արձանագրության պատճենը՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով ու հանձնաժողովի կնիքով:

Այսպիսով, ՀՀ ընտրական օրենսդրությամբ հենց վերը նշված անձանց է տրված ընտրական փաստաթղթերին ծանոթանալու, ինչպես նաև արձանագրությունների պատճեններ ստանալու իրավունքը:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ քրեական գործե-

րով նախաքննություն իրականացնելիս անհրաժեշտ է.

- նախ, պարզել, արդյոք այն անձը, ով ներկայացրել է նման պահանջներ, հանդիսանում է վստահված անձ, դիտորդ, ՋԼՄ ներկայացուցիչ կամ ընտրական հանձնաժողովի անդամ,
- ստուգել, արդյոք պահանջ ներկայացնելու պահին որևէ կերպ չի ընդհատվել վերոհիշյալ անձանց համապատասխան կարգավիճակը,
- պատասխանատու անձից պարզել խոչընդոտներ ստեղծելու պատճառը,
- խոչընդոտմանն ուղղված գործողություններն արձանագրելու համար առգրավել և ուսումնասիրել տեղամասային կենտրոնում տեղադրված տեսախցիկների տեսաձայնագրությունները,
- առգրավել հանձնաժողովի աշխատանքներն արձանագրող համապատասխան փաստաթղթերը (այդ աշխատանքների ընթացքի ժամանակագրական և փաստական հանգամանքներին ծանոթանալու համար),
- հարցաքննել հանձնաժողովի անդամներին, դիտորդներին, վստահված անձանց՝ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար և այլն:

**2.12. Ընտրական հանձնաժողովի նախագահի
լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը
(հոդված 154⁶)**

**Հոդված 154⁶. Ընտրական հանձնաժողովի նախագահի
լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ
կատարելը**

Ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի արդյունքում անհնարին է դարձել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեքի տարի ժամկետով:

ՀՀ քր. օր.-ի հոդված 154⁶-ը պատասխանատվություն է սահմանում ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Քննարկվող հանցագործության **անմիջական օբյեկտը** ընտրությունների անցկացման սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Օբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է անգործությամբ՝ ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով:

Այսպես, օրինակ՝ հանձնաժողովի նախագահը, ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 67-ի 4-րդ մասի համաձայն, բացում է քվեատուփը, քվեատուփից հանում քվեարկության մեկ ծրար, բարձրաձայն հայտարարում ծրարի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին, ապա ցուցադրում այնպես, որ այն

տեսանելի լինի ներկաների համար: Այս եղանակով կատարվում է քվեաթերթիկների հաշվարկ: Ուստի, հանձնաժողովի նախագահի կողմից այս պարտականության չկատարումը կհանգեցնի սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության, քանի որ առանց դրա անհնար կլինի ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը:

Քննարկվող հանցագործության իմաստով հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները ոչ պատշաճ կատարելու օրինակը կարող է կապված լինել ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 71-ի 9-րդ մասով նախատեսված պարտականությունների հետ: Մասնավորապես, նշված իրավանորմի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարի հետ մեկտեղ, պարտավոր է պարկը, չսահմանված նմուշի քվեարկության ծրարների փաթեթը, քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը և հանձնաժողովի կնիքը, դրոշմակնիքը քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, ներկայացնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Տվյալ դեպքում հանձնաժողովի նախագահի գործողություններում առկա կլինեն ՀՀ քր. օր.-ի քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ, եթե վերոնշյալ պարտականությունները չկատարվեն 12 ժամվա ընթացքում (օրինակ՝ եթե ներկայացնի, բայց քվեարկության ավարտից 18 ժամ հետո):

Հարկ է նշել նաև, որ քննարկվող հանցագործությունը նախատեսված է նյութական հանցակազմով. հանցագործության պարտադիր հատկանիշ է հետևանքը՝ ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփման անհնարիմությունը:

ՀՀ ընտրական օրենսգրքի գլուխ 13-ը ամրագրում է քվեարկության արդյունքներն ամփոփելու և աղյուսակավորելու, անձ-

տությունները որոշելու և ընտրությունների արդյունքները որոշելու կարգը, գլուխ 23-ը կարգավորում է Ազգային ժողովի համամասնական և մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների ամփոփման կարգը, գլուխ 30-ը՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների ամփոփման կարգը: Ուստի, արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 154⁶ հոդվածով որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի այն հանգեցրած լինի տեղամասային, ընտրատարածքային կամ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի մեծամասնական կամ համամասնական ընտրակարգով, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների՝ վերոնշյալ իրավական նորմերով նախատեսված կարգով արդյունքների ամփոփման անհնարինության:

Սուբյեկտիվ կողմից տվյալ հանցագործությունը բնութագրվում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցի, որ չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր լիազորությունները, նախատեսի, որ դրա արդյունքում կարող է անհնար դառնալ ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը և ցանկանա կամ չցանկանա, բայց գիտակցաբար թույլ տա դրա առաջացումը:

Քննարկվող հանցագործության **սուբյեկտը** հատուկ է՝ ընտրական հանձնաժողովի նախագահ հանդիսացող պաշտոնատար անձը: Ընդ որում, սույն հանցագործության սուբյեկտ է նաև ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ կամ բացակայության դեպքում՝ նախագահի տեղակալը, տեղամասային ընտրական հանձնաժողովի դեպքում՝ հանձնաժողովի քարտուղարը, որը ժամանակավորապես կատարում է ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները: Անհրաժեշտ է ընդգծել, որ ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները կատարող նախագահի տեղակալի կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի դեպքում՝ քարտուղարի կողմից ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորություն-

ների հետ չկապված այլ լիազորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում սույն հանցակազմով նախատեսված քրեական պատասխանատվություն վրա չի հասնում:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ քննարկվող հողվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս հաջորդաբար գնահատման (բացահայտման) են ենթակա էլակետային նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները.

- արդյոք արարքը կատարվել է ընտրական հանձնաժողովի նախագահի կամ նրա հանձնարարությամբ կամ բացակայության դեպքում՝ նախագահի տեղակալի, տեղամասային ընտրական հանձնաժողովի դեպքում՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից, ով ժամանակավորապես կատարում է նրա լիազորությունները,

- ընտրական հանձնաժողովի նախագահի ո՞ր լիազորությունը չի կատարվել կամ կատարվել է ոչ պատշաճ (այս հանգամանքը պարզելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել համապատասխան ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները),

- արդյոք այդ արարքի կատարումը անհնար է դարձրել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը (օրինակ՝ եթե բացակայում է քվեարկության ծրարների փաթեթը),

- կոնկրետ ո՞ր ընտրությունների անցկացման ընթացքում է կատարվել հանրորեն վտանգավոր արարքը և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գիտամեթոդական սույն ձեռնարկի հիմքում է դրվել Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացներին առնչվող հանցագործությունների որակման և դրանց վերաբերյալ քրեական գործերի քննության մեթոդիկայի հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրների քննարկման գաղափարը:

Վերոնշյալ հիմնախնդիրների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քննարկվող հանցավոր ոտնձգությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման գործում կարևորվում է ոչ միայն իրավակիրառ պրակտիկայի բարելավումը, այլև ՀՀ քրեական գործող օրենսգրքի կատարելագործումը: Բանն այն է, որ իրավակիրառողներին անհրաժեշտ են քրեական օրենքի այնպիսի ձևակերպումներ, որոնք կառուցված են հստակության, տրամաբանականության, ճշգրտության և պարզության պահանջներին համապատասխան: Ընդ որում, ընտրական գործընթացները կարգավորող քրեաիրավական նորմերի կատարելագործումը և միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխանեցումն անհրաժեշտ են ոչ միայն այդ գործընթացների հետ կապված հանցանքներ կատարողներին արդարացի պատասխանատվության ենթարկելու, այլև նման հանցագործությունները կանխարգելելու համար:

Այդ առումով անհրաժեշտ ենք համարում նաև քննարկվող հանցագործությունների համար նախատեսված պատժատեսակներում և պատժաչափերում փոփոխություններ և լրացումներ կատարելը: Բանն այն է, որ դրանք ՀՀ քրեական գործող օրենսգրքի ներկայիս ձևակերպումներով չեն համապատասխանում քննարկվող հանցագործությունների հանրային վտանգավորության բնույթին և աստիճանին, չեն արտացոլում պատժի իրական նպատակները: Բացի այդ, դրանցով չի պահպանվում քրեաիրավական համապատասխան ներգործության համաչա-

փությունը:

Չաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ առաջարկում ենք քննարկվող հողվածների սանկցիաներում ավելացնել նաև կալանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը (որպես թե՛ հիմնական, թե՛ լրացուցիչ պատժատեսակ), ինչպես նաև վերանայել քրեական գործող օրենսգրքով վերոհիշյալ հողվածների սանկցիաներով նախատեսված տուգանքների չափերն ու ազատագրկման ժամկետները:

Այդ իմաստով ամփոփելով մեր ուսումնասիրության արդյունքները՝ անհրաժեշտ ենք համարում հանդես գալ ՉՉ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ հետևյալ առաջարկություններով.

Չոդված 149. Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքների կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը

1. Անձի ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ թեկնածուի կամ նրա վստահված անձի կամ դիտորդի կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից առավելագույնը ութհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ երեք ամսից առավելագույնը մեկ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքները, որոնք՝

1) զուգորդվել են գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով,

2) կատարվել են նյութապես շահագրգռելով,

3) զուգորդվել են բռնություն գործադրելու սպառնալիքով,

4) կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,

5) կատարվել են մի խումբ անձանց կողմից,

6) զուգորդվել են անձին ազատությունից զրկելով՝

պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք՝

1) զուգորդվել են գույք ոչնչացնելով կամ վնասելով,

2) զուգորդվել են բռնություն գործադրելով,

3) կատարվել են կազմակերպված կողմից՝

պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից առավելագույնը ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Հոդված 150. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը

Հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելը կամ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը կամ դրանց քաղվածքները ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելը կամ դրանում մուտքագրված տվյալները փոփոխելը, կամ ընտրությունների կամ քվեարկության արդյունքները որևէ այլ եղանակով կեղծելը, ինչպես նաև ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու նպատակով քվեատուփ հափշտակելը կամ ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերը օրենքով սահմանված կարգով չներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Հոդված 151. Ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը

Ընտրողներին ապակողմնորոշելու նպատակով ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի կամ կուսակցության, կամ կուսակցությունների դաշինքի վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից առավելագույնը ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երեք ամսից առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Հոդված 152. Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը

1. Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգով դրանք չհրապարակելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից առավելագույնը ութհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից առավելագույնը յոթ տարի ժամկետով:

2. Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու

նատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կեղծիքներ կատարելով կազմելը կամ օրենքով սահմանված կարգը խախտելով դրանցում կեղծիքներ կատարելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Չոդված 153. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը

Կեղծ տվյալներ հայտնելու կամ կեղծ փաստաթուղթ ներկայացնելու, կամ որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից առավելագույնը ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից առավելագույնը երեք տարի ժամկետով:

Չոդված 154. Քվեարկության գաղտնիությունը խախտելը

Ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը կամ քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողի քվեարկած քվեաթերթիկը ստուգելը կամ քվեարկության խցիկ մուտք գործելը, կամ քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից առավելագույնը ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Չոդված 154¹. Կեղծ ընտրական կամ հանրաքվեի քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը

կամ իրացնելը

1. Շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով՝ կեղծ ընտրական կամ հանրաքվեի քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ իրացնելը՝

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից առավելագույնը երեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը՝

1) էական ազդեցություն է ունեցել տեղական ընտրությունների արդյունքների վրա,

2) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք՝

1) էական ազդեցություն են ունեցել համապետական ընտրության կամ հանրաքվեի արդյունքների վրա,

2) կատարվել են կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից առավելագույնը ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Հոդված 154². Ընտրակաշառք տալը կամ ստանալը

1. Հանրաքվեի ժամանակ «այո» կամ «ոչ» կամ թեկնածու-

ներից, համամասնական ընտրակարգով ընտրությանը մասնակցող կուսակցություններից կամ կուսակցությունների դաշինքներից որևէ մեկի օգտին «կողմ» կամ «դեմ» քվեարկելու, հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու պայմանով թեկնածուից, կուսակցությունից կամ կուսակցությունների դաշինքից անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրակաշառք ստանալը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից առավելագույնը ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով:

2. Հանրաքվեի ժամանակ «այո» կամ «ոչ» կամ թեկնածուներից, համամասնական ընտրակարգով ընտրությանը մասնակցող կուսակցություններից կամ կուսակցությունների դաշինքներից որևէ մեկի օգտին «կողմ» կամ «դեմ» քվեարկելու, հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու պայմանով ընտրողին անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրակաշառք առաջարկելը, խոստանալը կամ տալը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից առավելագույնը երկուհազարապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հոդված 154³. Ընտրական հանձնաժողովի կնիքը չվերադարձնելը կամ կնիքի պահպանման սահմանված կարգն այլ կերպ խախտելը

Ընտրական հանձնաժողովի կնիքը սահմանված ժամկետում դրա համար պատասխանատու անձի կողմից չվերադարձնելը կամ կնիքի պահպանման համար սահմանված կարգն այլ կերպ խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից առավելագույնը հազարապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից առավելագույնը յոթ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով:

Հոդված 154⁴. Ձեռքով տեղամասային կենտրոն մուտք գործելը

Քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար, առանց ծառայողական անհրաժեշտության տեղամասային կենտրոն մուտք գործելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից առավելագույնը ութհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից առավելագույնը յոթ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հոդված 154⁵. Ղնտրական կամ հանրաքվեի փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը

Վստահված անձին, ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերին օրենքով սահմանված կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի արձանագրության պատճենը կամ քաղվածքը չտալը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից առավելագույնը ութհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից առավելագույնը յոթ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելա-

գույնը երեք ամիս ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Չորված 154⁶. Ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը

Ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը, որի արդյունքում անհնարին է դարձել հանձնաժողովի կողմից ընտրության կամ քվեարկության արդյունքների ամփոփումը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՕՐԵՆՔՆԵՐԻՑ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՑ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 2.

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

Հոդված 4.

Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Հոդված 30.

Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:

Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինք-

նակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

2. ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (20 մարտի 1952թ., Փարիզ)

Հոդված 3. Ազատ ընտրությունների իրավունք

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք ապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս:

3. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏ- ՐԱՍՏՄԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ԱԿՏԵՐ

Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների և հանրաքվեների մախապատրաստման, կազմակերպման և անցկացման հետ կապված հարցերը կարգավորվում են նաև՝

1. «ԱՊՀ մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» կոնվենցիայով,
2. ՀՀ ընտրական օրենսգրքով,
3. «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով,
4. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով:

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ՔԱՂՎԱԾՔ ԴԴ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻՑ

Հոդված 149. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը

1. Քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք՝

1) կատարվել են գույքին վնաս պատճառելու սպառնալիքով,

2) կատարվել են նյութապես շահագրգռելով,

3) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

4) կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,

5) կատարվել են մի խումբ անձանց կողմից՝

6) զուգորդվել է անձին ազատությունից զրկելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից մինչև հինգ տարի ժամկետով:

(149 հոդվածը խմբ., լրաց. 22.12.06 ՀՕ-2-Ն, խմբ. 26.05.11 ՀՕ-166-Ն)

Չոդված 150. Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը

Չանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելը կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքները ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը, քվեատուփի հափշտակելը, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելը, մուտքագրված տվյալները փոփոխելը, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

(150 հոդվածը խմբ. 22.12.06 ՉՕ-2-Ն)

Չոդված 151. Ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը

Ընտրողներին ապակողմնորոշելու նպատակով ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

(151 հոդվածը խմբ. 22.12.06 ՉՕ-2-Ն, 26.05.11 ՉՕ-166-Ն)

Չոդված 152. Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը

1. Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները

քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգը խախտելը, դրանք չտրամադրելը կամ սահմանված կարգով դրանք չիրապարակելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից հազարիինգհարյուրապատիկի չափով:

2. Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

(152 հոդվածը խմբ. 22.12.06 ՉՕ-2-Ն, 26.05.11 ՉՕ-166-Ն)

Հոդված 153. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը

Կեղծ տվյալներ հայտնելու, կեղծ փաստաթուղթ ներկայացնելու կամ որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով:

(153 հոդվածը խմբ. 22.12.06 ՉՕ-2-Ն, 26.05.11 ՉՕ-166-Ն)

Հոդված 154. Քվեարկության գաղտնիությունը խախտելը

Քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ա-

զատագրկմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով:

(154 հոդվածը փոփ. 22.12.06 ՉՕ-2-Ն, խմբ. 26.05.11 ՉՕ-166-Ն)

Չոդված 154¹. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ իրացնելը

1. Անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ այլ եղանակով իրացնելը՝

պատժվում է ազատագրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է խոշոր չափերով, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատագրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

(154¹ հոդվածը լրաց. 22.12.06 ՉՕ-2-Ն)

Չոդված 154². Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը

1. Թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով թեկնածուներից անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք ստանալը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատագրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Ընտրողին թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելը, որը կատարվել է գույքին վնաս պատճառելու սպառնալիքով, ան-

ծամբ կամ միջնորդի միջոցով կաշառք տալով, բռնությանը կամ բռնություն գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

(154² հոդվածը լրաց. 22.12.06 ՅՕ-2-Ն, խմբ. 26.05.11 ՅՕ-166-Ն)

Հոդված 154³. Ընտրական հանձնաժողովի կնիքը չվերադարձնելը, կնիքի պահպանման սահմանված կարգը խախտելը

Ընտրական հանձնաժողովի կնիքը սահմանված ժամկետում դրա համար պատասխանատու անձի կողմից չվերադարձնելը, ինչպես նաև կնիքի պահպանման համար սահմանված կարգը խախտելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

(154³ հոդվածը լրաց. 22.12.06 ՅՕ-2-Ն, խմբ. 26.05.11 ՅՕ-166-Ն)

Հոդված 154⁴. Ձեռքով՝ տեղամասային կենտրոն մուտք գործելը

Քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն (քվեարկության խցիկ) մուտք գործելն առանց ծառայողական անհրաժեշտության՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

(154⁴ հոդվածը լրաց. 22.12.06 ՅՕ-2-Ն, խմբ. 26.05.11 ՅՕ-166-Ն)

Հոդված 154⁵. Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաս-

տաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալը

Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

(154⁵ հոդվածը լրաց. 22.12.06 ՅՕ-2-Ն, խմբ. 26.05.11 ՅՕ-166-Ն)

Յոդված 154⁶. Ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

Ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի արդյունքում անհնարին է դարձել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

(154⁶ հոդվածը լրաց. 26.05.11 ՅՕ-166-Ն)

ՀԱՎԵԼՎԱԾ 3.
ՆՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՊՈԹԵՏԻԿ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրադրություն 1.

ՀՀ ազգային ժողովի պատգամավորության թեկնածու Ս-ն, իր թեկնածության գրանցման համար անհրաժեշտ քանակի ստորագրություններ հավաքելու համար յուրաքանչյուր ստորագրողի բաժանում էր 5-հազարական դրամ՝ խոստանալով բաժանել ևս 10-հազարական դրամ, եթե նրանք պարտավորվեն նաև քվեարկել իր օգտին:

Ինչպե՞ս պետք է լուծվի Ս-ի քրեական պատասխանատվության հարցը:

Իրադրություն 2.

ՀՀ նախագահի ընտրությունների տարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղար Պ-ն հանձնաժողովի նախագահ Ջ-ի հրահանգով ձայների հաշվարկման ժամանակ մյուսների համար աննկատ ոչնչացնում է թեկնածուներից մեկի օգտին քվեարկված հազար հատ քվեաթերթիկ, ինչի արդյունքում տվյալ ընտրատարածքում իր և Ջ-ի նախընտրած թեկնածուն հաղթում է հինգ հարյուր ձայնի առավելությամբ:

Երբ այդ կապակցությամբ եղած բողոքները ստուգելու նպատակով ընդդիմադիր թերթի լրագրող Հ-ն դիմում է ընտրական հանձնաժողովի նախագահին՝ խնդրելով իրեն տրամադրել հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, Ջ-ն նրան մերժում է՝ պատճառաբանելով, որ պարտավոր չէ բոլոր ցանկացողներին տրամադրել ընտրական նշված փաստաթղթերը:

Ինչպե՞ս պետք է լուծվի Պ-ի և Ջ-ի քրեական պատասխանատվության հարցը:

Իրադրություն 3.

Գյուղապետի տեղակալ Պ-ն, տեղեկանալով, որ գյուղի ծայրամասերի բնակիչները բացասական են տրամադրված գործող իշխանությունների հանդեպ, հրահանգեց ընտրությունների օրը չեղյալ հայտարարել նրանց դեպի ընտրատեղամասեր տեղափոխող բոլոր երթուղիները: Դա պատճառաբանվեց այն հանգամանքով, որ սպառնվել են վառելանյութ ձեռք բերելու համար անհրաժեշտ բոլոր միջոցները:

Ենթակա է արդյոք Պ-ն քրեական պատասխանատվության: Եթե այո, ապա ինչպե՞ս պետք է որակել նրա արարքը:

Իրադրություն 4.

Քաղաքացի Ա-ն անբարյացակամ հարաբերությունների մեջ էր որպես ՀՀ ազգային ժողովի պատգամավորության թեկնածու գրանցված Ս-ի հետ: Վերջինիս վատություն անելու նպատակով նա ընտրություններից մեկ օր առաջ համոզեց իր հարևաններ Լ-ին, Կ-ին և Մ-ին քվեարկել Ս-ի դեմ, որին ի պատասխան խոստացավ նրանց համար ճոխ ճաշկերույթ կազմակերպել: Նրանք իրականացրեցին Ա-ի ցանկությունը:

Ինչպե՞ս պետք է որակել Ա-ի, Լ-ի, Կ-ի և Մ-ի արարքները:

Իրադրություն 5.

Նախագահական ընտրությունների օրը քվեարկության արդյունքները հաշվարկելու ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովում որպես ընդդիմադիր թեկնածուի վստահված անձ գրանցված Մ-ն հայտնաբերեց, որ ընտրական հանձնաժողովի նախագահ Գ-ն լրացուցիչ նշումներ է անում ընդդիմադիր թեկնածուի օգտին քվեարկված քվեաթերթիկների վրա՝ դրանք անվավեր դարձնելու նպատակով: Մ-ն միջամտում է և բարձրաձայնում ապօրինությունները դադարեցնելու մասին: Դրան ի պատասխան Գ-ն պահանջում է տեղամասում գտնվող ոստիկաններից դուրս հրավիրել Մ-ին՝ նրա կողմից հանձնաժողովի աշխատանքները խոչընդոտելու պատճառաբանությամբ:

Ինչպե՞ս պետք է լուծվի Գ-ի և Մ-ի քրեական պատասխանատվության հարցը:

Իրադրություն 6.

Թաղապետի թեկնածու Բ-ի կողմնակիցներ Գ-ն, Մ-ն և Դ-ն, նրա կարգադրությամբ, ընտրակաշառք են բաժանում ընտրողներին, նրանց նախընտրած թեկնածուի օգտին անհրաժեշտ քանակությամբ ձայներ հավաքելու նպատակով: Համոզվելու համար, որ կաշառված ընտրողները կքվեարկեն հենց իրենց թեկնածուի օգտին, քվեարկության օրը Գ-ն, Մ-ն և Դ-ն, առանց Բ-ին տեղեկացնելու, յուրաքանչյուր քվեարկողի տրամադրում են ֆոտոխցիկով բջջային հեռախոս և պահանջում լուսանկարել և հետագայում իրենց ներկայացնել քվեարկության արդյունքը:

Ինչպե՞ս պետք է որակել Բ-ի, Գ-ի, Մ-ի և Դ-ի արարքները:

Իրադրություն 7.

Ցանկանալով առավելագույնս օգտակար լինել նախագահական ընտրություններում իր նախընտրած թեկնածուին՝ Մ-ն որոշում է երկրորդ անգամ ներկայանալ ընտրական տեղամաս և քվեարկել նաև իր երկվորյակ եղբոր՝ Վ-ի փոխարեն, որը այդ օրերին ծանր հիվանդ էր և ի վիճակի չէր տեղաշարժվել: Այդ նպատակով նա, ստանալով եղբոր համաձայնությունը, վերցնում է վերջինիս անձնագիրը և ներկայանում ընտրական տեղամաս: Սակայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը բացահայտում է խաբեությունը և Մ-ն ձերբակալվում է:

Ինչպե՞ս պետք է լուծվի Մ-ի և Վ-ի քրեական պատասխանատվության հարցը:

Իրադրություն 8.

Գյուղապետի ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Ս-ն քվեարկության սենյակում չառանձնացրեց հատուկ քվեախցիկներ, ինչի արդյունքում գյուղի բնակիչները զրկվեցին գաղտնի քվեարկելու հնարավորությունից: Տվյալ հանգամանքը Ս-ն բացատրեց համապատասխան ֆինանսական միջոցների բացակայությամբ՝ նշելով, որ բոլորն էլ միևնույն գյուղի բնակիչներ են և նախապես տեղյակ են, թե ով գյուղապետի որ թեկնածուի օգտին է ձայն տալու:

Ենթակա է արդյոք Ա-ն քրեական պատասխանատվության: Եթե այո, ապա ինչպե՞ս պետք է որակել նրա արարքը:

Իրադրություն 9.

Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու Կ-ն իր վստահված անձանց անվան տակ վարձեց մի խումբ երիտասարդներ, ովքեր պետք է ամեն կերպ նպաստեին նրա ընտրվելուն: Այդ խմբի աշխատանքները, Կ-ի հրահանգով, պետք է համակարգեր նախկինում խուլիզանության համար դատապարտված Ա-ն: Երբ ընտրությունների օրն անցկացվող հարցումների արդյունքներից պարզ դարձավ, որ ընտրական տեղամասերից մեկում Կ-ն պարտվում է, նրա «վստահված անձինք» որոշեցին միջոցներ ձեռնարկել, որպեսզի այդ տեղամասում ընտրությունները խափանվեն և չկայանան: Այդ նպատակով Ա-ն, որի մոտ ինքնաշեն հրազեն կար, և նրա խմբի անդամները մուտք գործեցին ընտրական տեղամաս, վեճի բռնվեցին այնտեղ հասարակական կարգն ապահովող ոստիկանների և ընտրական հանձնաժողովի անդամների հետ, որը վերաճեց ծեծկռտուքի: Արդյունքում կոտրվեցին քվեատուփերը, իսկ դրանցում առկա քվեարկված քվեաթերթիկները ոչնչացվեցին:

1) Ինչպե՞ս պետք է լուծվի Կ-ի, Ա-ի և նրա ղեկավարած խմբի անդամների քրեական պատասխանատվության հարցը:

2) Կփոխվի արդյոք արարքի որակումը, եթե պարզվի, որ Կ-ի հաղթանակն ապահովելու նպատակով մինչև ընտրությունները Ա-ն և նրա խմբի անդամները նաև պատգամավորության մյուս թեկնածուների վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ են տարածել:

Իրադրություն 10.

Թաղապետի ընտրություններում իր նախընտրած թեկնածու Մ-ի հաղթանակին էապես նպաստելու նպատակով ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու Ա-ն որոշում է, այդ ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով, կեղծիքներ կատարել: Իր մտադրության մասին նա տեղեկացնում է նաև Մ-ին, որը ոչ միայն ողջունում է իր «բարերարի» որոշումը, այլև տրամադրում նրան մյուս թեկնածուի կողմ-

նակիցների ցուցակը: Ա-ի կատարած կեղծիքների հետևանքով ընտրողների ցուցակներից դուրս են մնում մյուս թեկնածուի բազմաթիվ կողմնակիցներ, որոնցից միայն մի քանիսին է հաջողվում դատական կարգով վերականգնել ընտրելու իրենց իրավունքը: Արդյունքում Մ-ն ընտրվում է թաղապետ:

1) Ինչպե՞ս պետք է լուծվի Ա-ի և Մ-ի քրեական պատասխանատվության հարցը:

2) Կփոխվի արդյոք արարքի որակումը, եթե Մ-ին, այնուամենայնիվ, չհաջողվի ընտրվել թաղապետ:

Իրադրություն 11.

Իրենց բիզնեսի հետագա զարգացումն ապահովելու նպատակով գործարարներ Լ-ն և Դ-ն որոշում են միջոցներ ձեռնարկել Ազգային ժողովի պատգամավորության իրենց նախընտրած թեկնածու Կ-ի հաղթանակն ապահովելու համար: Այդ նպատակով նրանք դիմում են իրենց գործընկեր Վ-ին՝ խնդրելով նրան իրեն պատկանող տպարանում պատրաստել երկու հազար հատ կեղծ ընտրական քվեաթերթիկներ և նույն քանակությամբ քվեարկության կեղծ ծրարներ: Վերջինս տալիս է իր համաձայնությունը և հանձնարարում տպարանի աշխատակիցներ Մ-ին և Զ-ին պատրաստել պատվիրված քվեաթերթիկներն ու ծրարները՝ խոստանալով նրանց լրացուցիչ վարձատրություն:

Պատրաստված կեղծ քվեաթերթիկներն ու քվեարկության կեղծ ծրարները Լ-ն և Դ-ն հանձնում են դրանք ընտրական հանձնաժողովի անդամ հանդիսացող իրենց կողմնակիցներ Բ-ին, Թ-ին և Փ-ին՝ քվեարկության ժամանակ լցոնման նպատակով օգտագործելու համար:

Քվեարկության օրը ձայները հաշվելու ընթացքում ընդմիջում անելու ժամանակ Բ-ն օգտվում է առիթից, որ ընտրական հանձնաժողովի նախագահ Բ-ն առանց հսկողության է թողել կնիքը, գաղտնի վերցնում է այն և Թ-ի ու Փ-ի օգնությամբ կնիքում բոլոր կեղծ քվեաթերթիկներն ու քվեարկության կեղծ ծրարները և խառնում դրանք քվեարկված քվեաթերթիկների հետ: Արդյունքում Կ-ին հաջողվում է կեղծիքներով ընտրվել Աժ պատգամավոր:

1) Ինչպե՞ս պետք է լուծվի L-ի, Դ-ի և Վ-ի քրեական պատասխանատվության հարցը:

2) Ենթակա են արդյոք քրեական պատասխանատվության Մ-ն և Զ-ն: Կփոխվի՞ արդյոք նրանց արարքի որակումը, եթե պարզվի, որ նրանք տեղյակ չեն եղել քվեաթերթիկների և քվեարկության ծրարների կեղծ լինելու մասին:

3) Ինչպե՞ս պետք է որակել ընտրական հանձնաժողովի անդամներ Բ-ի, Թ-ի և Փ-ի արարքները:

4) Ենթակա է արդյոք քրեական պատասխանատվության ընտրական հանձնաժողովի նախագահ Բ-ն: Եթե այո, ապա ինչպե՞ս պետք է որակել նրա արարքը:

Իրադրություն 12.

Ընդդիմադիր կուսակցության և հատկապես դրա որոշ գործիչների վրա ճնշում գործադրելու և առաջիկա նախագահական ընտրություններին նրանց մասնակցությունը բացառելու նպատակով Ազգային անվտանգության ծառայության համապատասխան բաժնի պետ Թ-ն ստուգումներ է նախաձեռնում այդ կուսակցության կենտրոնական գրասենյակում: Ստուգումները պատճառաբանելով տվյալ կուսակցության հակապետական գործունեության մասին վկայող ապացույցների հայտնաբերման անհրաժեշտությամբ՝ Թ-ի կարգադրությամբ առգրավվում են գրասենյակում եղած բոլոր փաստաթղթերն ու համակարգիչները, ինչի հետևանքով մոտ վեց ամիս անհիմն կասեցվում է տվյալ կուսակցության գործունեությունը, իսկ դրա ակտիվիստները հնարավորություն չեն ունենում պատշաճ կերպով մասնակցելու նախագահական ընտրություններին:

Ենթակա է արդյոք Թ-ն քրեական պատասխանատվության: Եթե այո, ապա ինչպե՞ս պետք է որակել նրա արարքը:

**МЕЖПАРЛАМЕНТСКАЯ АССАМБЛЕЯ
ГОСУДАРСТВ - УЧАСТНИКОВ
СОДРУЖЕСТВА НЕЗАВИСИМЫХ ГОСУДАРСТВ**
*Международный институт мониторинга развития демократии,
парламентаризма и соблюдения избирательных прав
граждан Ереванский филиал*

Уголовно-правовая защита избирательных прав и
права на участие в референдуме в Республике
Армения в свете Конвенции о стандартах
демократических выборов, избирательных прав и
свобод в государствах – участниках СНГ

Տպագրվել է «Հայրապետ հրատարակչություն» ՍՊԸ-ում:
Չափսը 60x84¹/₁₆ : Ծավալը 7.5 մամուլ:
Քանակը՝ 90 օրինակ: